

ԿՌՈՒՆԿ

ՀԱՅՈՅ ԱՇԽԱՐՀԻ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՈՐԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԼՈՒՍԱԻՈՐՈՒԹԵԱՆ

Դ՝ ՏԱՐԻ 1863 ԹԻԻ ԺԱ՝

Ն Ո Յ Ե Մ Բ Ե Ր

ԱՂԲԻԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԱՐԴԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԵՂԵԼՈՒԹԵԱՆՅ ԸՆԴ ՄԷՋ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԱՅՆ

ԴԱՆԻԷԼԻ ԵՒ ԴԱԻԹԻ

Ի ՄԱՆՈՒԷԼ ՎԱՐԴԱՊԵՏԷ ԱԼԹՈՒՆԵԱՆՅ

ԿԻՒՄԻՇԻԱՆԵՅԻՈՅ

Առաջին ընտրութիւն սրբազան Դանիէլ պատրիարքի ի կաթողիկոսութիւն և անուանակոչութիւն Դաւիթ եպիսկոպոսի ի պատրիարքութիւն Պօլսոյ:

Շարունակութիւն.*

Յետ ամենայն վերջ յիշեալ անցիցն՝ հասեալ համբաւ առ եկեղեցիք թէ Բարդուղիմէոս եպիսկոպոս՝ անկարելութիւն

* Տես Կռնիկան ճախընթաց Թուումը. Էրես 741.

պատճառելով՝ ոչ առնու յանձն զպատիւ կաթողիկոսութեան, և ընտրութիւն տակաւին կայ անկատար:

Վասն որոյ վերստին հրամանագիր առաքելք զի զայլ ոք առանց յապաղելոյ ընտրեալ ծանուցեն իւրեանց՝ զի մի ձեռն ուրուք խառնեսցի ի նոյն:

Թէպէտ յարգելի իշխանքն՝ Գալուստ եպիսկոպոսի անպատեհ արարմամբն վերաւորելով՝ այլ ձեռնամուխ լինել ոչ կամէին, բայց ի վերակրկնիլ տէրութեան հրամանին, եկեալք առ սրբազան պատրիարքն ասեն, յայտնի է ամենայն ջանացողութիւն և խորհուրդք մեր սրբազնութեանդ որ զօգուտ ազգին, սրբոյ աթոռոյն և տեառնդ խորհելով՝ զմի ոք յայն սրբազան աստիճանի պատուովն յատկացուցանել կամեցաք, առ ի պահել զհարազատութիւն մեր սոյն տէրութեան՝ և ազատել զմեզ ի բամբասանաց բազմաց: Սակայն ահա՛ ամենայն հետևողութիւնք մեր եզեն ընդունայն, եթէ յետ այսորիկ այլ ինչ ինչ յառաջանալ ունի՝ ոչ գիտեմք:

Եթէ տէրդ բարեհաճի յանձն առնուլ՝ բարի է՝ ապա թէ ոչ՝ զայլ ոք ոչ կարեմք գտանել՝ և հրաման տէրութեան մնայ անկատար:

Պատասխանեալ սրբազանն գլխելով զանձկութիւն առաջիկայ գործառնութեանս, եթէ ազգային համահաճութեամբ պատշաճ դատէք վասն իմ, ի յօգուտ սրբոյ աթոռոյն և ի սէր ազգին իմոյ՝ հանդերձ նեղսիրութեամբն յանձն առնում ամենայն յօժարութեամբ, զի կարծիք տէրութեանն ի բոլորիցս բարձցի և վասն բարեխառնութեանց ազգին առ իս եկեալ մահն, կեանք և անմահութիւն է ինձ:

Ի լսել խորհրդական յարդի իշխանաց, ի մէջ պատրիարգարանին, մատուցին ի 1800 Յունվարի 16 ի սուրբ Էջմիածին զրեցեալ մահսարն վասն իւրն սրբազնութեան, և վասն ի Ռուսաստան եղեալ Սրբազան Եփրեմ արքեպիսկոպոսի յորում ստորագրեալ սեպհական ձեռամբն այսպէս և կնքել Պատրիարգական կնքովն զնոյն մահսարն:

Վասն անխափալ մարդասիրութեան Աստուծոյ՝ յօժար կամովք իմովք, խոնարհեցայ ի համակամ խնդիրս հաճութեան միաբանիցն սրբոյ աթոռոյն՝ և օրհնեալ իշխանապե-

Աստուածածնի եկեղեցին և ի լուր ամենեցուն կատարուին տալ կաթողեկոսական՝ և պատրիարքական ընտրութեան։

Որոց ամենեցուն աւելի բան զչորս հարիւր անձինս ժողովեալք, ի կատարումն՝ և ի զննին հոգեւոր հանդիսին։ 1800 ՌՄԽԹ յապրելի 28:

Ի սոյն հանդէս բաց ի վեր անդր յանուանէ յիշեալ եպիսկոպոսոց՝ էր և Նիկոմիդեայ գէտ Բարդուղիմէոս արքեպիսկոպոսն, որ ոչ կամեցաւ յանձն առնուլ զպատիւ կաթողեկոսութեան, բայց միայն նուիրակ Գալուստ եպիսկոպոսն, վասն անպատեհ արարմանցն զալեալ էր վանձն, և ջանայր սրբազանն, հաճութեամբ իշխանաց ընդարձակել նմա շրջել յայտնապէս:

Ի գումարիլ ժողովոյն թողեալք զՍրբազանն ի ներքս ի պատրիարքարանն, նախ՝ եպիսկոպոսք՝ և վարդապետք՝ զնոսցեալք ի սուրբ եկեղեցին, յիշեալ մահսարաբեր Գաւիթ եպիսկոպոսն կացեալ յատեան՝ զոհացոյական ոճիւ, մեծ շնորհակալութիւն մատուցեալ բոլոր ազգին, օրհնելով զտէրութիւն, զթագաւորն, զիշխանսն մեր՝ և՞ զհամայն գաւս քահանայից՝ և ժողովրդոց՝ որք միաբան լսելով աղերսանաց զրութեանցն մահզարին՝ բարեհաճեցան շնորհել զքանկալի պատրիարքն իւրեանց՝ զնալ ի սուրբ աթոռն և լինել ընդհանրական զլուս շայտտանեաց սուրբ եկեղեցւոյ, յատենախօսութեան այնմիկ՝ տեսեալ ամենեցուն թէ առաջին ջանացողութիւնք իւրեանց՝ ոչ թողուլ զՍրբազանն, ոչ ինչ օգնէ, ուստի միաբան զաղաղակ բարձեալ Աստուած շնորհաւոր աւրասցէ զընդհանրական շայրապետութիւն Սրբազան Հօր մերոյ կենօք՝ բարի հովութեամբ հովուեսցէ զմեզ մինչ ի խորին ծերութիւն, և եղիցի մեզ պսակ պարծանաց ուղղափառ վարդապետութեամբն իւր:

Ապա խնդրանօք ժողովոյն եպիսկոպոսք վարդապետք, և նոյն Գաւիթ եպիսկոպոս ընդ նոսա՝ զնոսցեալք ի պատրիարքարանն, արկեալք ի վերայ սրբազանին զեկեղեցիկ շուրջառ զկենսատու սուրբ խաչն և զվիշապաղլուս գնաւադանն տուեալ ի սուրբ ձեռան, եկեղեցականքն ամենայն, շուրջառովք՝ շաղկօք, և բուրվառօք՝ վառեալ մեծամեծ մոմեղինօք տարածեալք ի վերայ և զամպհովանին խորհրդաւոր շարականօք, քաղցրաձայն դարա-

զօրհնութիւնս ձերդ սրբազնութեանց՝ բերկրութեամբ սրտի,
ընդ երկայն աւուրս վայլեսցուք:

Առ այն միաբանական բարեհաճութիւն ժողովոյն յառաջ կոչեալ սրբազանն զԴաւիթ եպիսկոպոսն՝ ասացեալ նմա զպահպանիչն վասն պատրիարքութեան, և նա անդ համբուրեալ զաջ սրբազանին՝ կացեալ առաջի սուրբ Աստուածածրնի սեղանոյն ի ներկայութեան ժողովոյն, ասաց նոյն Դաւիթ եպիսկոպոսն զաղօթս զայս:

(Որ ընտրեցեր և ընկալար զերանելի և զերջանիկ զսրբազան Դանիէլ Հայրապէտն մեր Քրիստոս Աստուած՝ և այլն) վկայեն առ այս մահզերքն Պօլսեցւոց յերեսն 78:

Ապա նստուցեալք զսրբազանն յաթոռն, և զԴաւիթ եպիսկոպոսն առ ընթեր նորա, եկեալ կարգաւ ժողովոյն, և պիսկոպոսաց վարդապետաց՝ քահանայից՝ և իշխանաց՝ ընդ ժողովրդոց, նախ զսուրբ աջ և զծունկ սրբազանին և զկնի միայն զաջ Դաւիթ եպիսկոպոսի մի ըստ միջէ համբուրեալք շնորհաւորեցին զԿաթողիկոսութիւն միոյն. և զպատրիարքութիւն միւսոյն, որում ետ սրբազանն անդանօր՝ զգաւազանն ի ձեռն և արկեալ զպատուական փիլոնն ի վերայ, լսեալ ամենեցուն հրճուանօք փառս տային Աստուծոյ, որ սիրոյ միաբանութեամբ զերկաքանչիւրոյ զիշխանութեան զբարեկարգ անօրէնութիւնսն տեսին յայն օր:

Եւ առ ժամայն նստեալք ի մէջ սուրբ եկեղեցւոյ՝ կնքեալք զմահզարն, և զրեալ զարզն առաքեցին ի դուռն եպարքոսի զի ըստ նախնական սովորութեան շնորհել զպէրաթ և զՖիրման Կաթողիկոսի և զգեցուցանել զղաֆթան պատրիարգի, ի լրութիւն երկուց գործոցն:

Յերկրորդի աւուրն որ էր կիւրակէ, ի ժամ քարոզին կացեալ նախ Դաւիթ եպիսկոպոս ի տեղին քարոզութեան, պատշաճաւոր բանիւք գովեաց զբարեմտութիւն ազգին, օրհնեաց զմեծամեծսն և զփոքունսն ունելով յամենեցունց զշնորհակալութիւն, ի լուր բոլոր ժողովրդոց՝ յայտնեայց զնստութիւն Սրբազանին ի Կաթողիկոսութիւն, և ամենեքեան շնորհաւորեցին ի մէջ սուրբ եկեղեցւոյն.

Յետ այնորիկ ինքն սրբազանն նոյն կետայն՝ կանգեալ յառաջ

ռակութեան, սկզբնարարն սատանայ՝ և աստանօր վերստին սկսաւ օգնականութեամբ քաջ դորձակցացն իւրոց՝ սերմանել զօրոմն չարութեան և աւերել զբազմաշխատ տաժանութեամբ տնօրինեալ զգեղեցիկ շինուած խաղաղութեան սուրբ եկեղեցւոյ:

Խանդարումն բարեկարգութեան վերոյ գրելոց պատճառեալ յայտնի յամառութենէ յիշեալ Գալուստ նոսրակի, և ի գաղտնի դարանակալ նենդութենէ Յովնանէս Եպիսկոպոսի և իւրայնոցն:—

Պատճառ հիմն և արմատ ստորագրեալ խորհաւանաց՝ դաւիթ և յարատեւական խռովութեանց, նախ և յառաջ՝ եղեն Յօհաննէս եպիսկոպոս՝ սպասաւոր Զաքարիայ պատրիարդի: և Սահաթճի Իւսուֆի որդի Սահաթճի Բարդուղիմէոսն, ապա հեղհեղեալ բազմացեալ ժամանեցուցին յայն վախճան մինչև կատարելապէս բարձեալք յազգէ մերմէ զսէր և զմիաբանութիւն, և փոխանակ սոցա՝ թողեալք յաշխարհի առ ազդ մեր՝ մշտնջենաւոր նախատանաց արձան:

Քանզե յիշեալ Սահաթճի Իւսուֆեան սահաթճի Բարդուղիմէոսն ունենով բաղձանք զՊայպուրաի Զամաշըճօղլու յիշեալ Յօհաննէս եպիսկոպոսն ինքնազլուխ, առանց հաճութեան ազգին՝ կացուցանել պատրիարդ Պօլոյ. զի ըստ հպարտ բարուց իւրոց՝ իբր յատկացի ի բազմամարդ քաղաքին կոստանդնուպօլսոյ:

Վասն որոց յառաջագոյն գաղանապէս՝ բազում խոստմունս արարեալ առ այլ ազգ իշխանաւորսն, զի կամեսցին դարձուցանել՝ զլնտրութիւն ազգին վասն Դաւիթ եպիսկոպոսի, ընդունայն յետս և կացուցանել ի տեղի նորա զսիշեալ Յօհաննէս եպիսկոպոսն, որ էր բաղձացօղ ի կենդանութեան Զաքարիայ պատրիարդ հօր իւրոց:

Վասն այնորիկ ի գնալ Ազգային արդին ի դուռն թէ՛ զԴանիէլ պատրիարդն մեր՝ կամիմք առաքել ի Կաթողիկոսութիւն, և զմահօտարբեր Դաւիթ եպիսկոպոսն հրամանաւ ձերով՝ կացուցանել աստ մեզ պատրիարդ և հայցեմք շնորհել միոյն զպէրաթ և զՔէրման և միւսայն զգեցուցանել

Եւ զակառեալն զհետ իշխանութեան Գալուստ եղիս-
կոյոս, ոչ գիտելով թէ քան զինքն առաւել ճարտարապետք
յառաջագոյն կազմեալ են զմեքենայսն, պատրեալ խրատով Գե-
որգ Աղանկովի և թարապխանաճի Մինասի, եղև վէմ՝ զլոր-
ման և զայթակղութեան ի մէջ ազգի մերոյ:

Երկրորդ անգամ պատճառ խռովութեան լինիլ Գալուստ նուիրակին
է այսպէս:

Քանզի մինչ ի թագստեանն կայր՝ փոխանակ զղջական բա-
նիւ զսիրտս իշխանայն շեջուցանել ջանալոյն, միջնորդու-
թեամբ Գեորգ Աղանկովի Ռուսեան զեսպանն խնդրեալ ի
զրանէ կարբքոսի զաղաաութեան գիր Գալուստին, որ է զիթ-
լախն. որ և այս էր ընդ գէմ իշխանաց՝ զի պատրիարզին
պարտ էր տալ զիթլախն, և ոչ զեսպանին խնդրել՝ վասն որոյ
տէրութիւնն պահելով զկարգն հրամայեաց պատրիարզին զրել
զիթլախի արդն նորա, որ և նա գրեաց:

Սակայն Գալուստ արհին յայլ ևս մեծամեծ իրողութիւնս
բուռն հարեալ՝ խրատով յիշեալ Գեորգի և թարապխանաճի
Մինասի, իւր իսկ ձեռամբն առ ի Պէկլէրպէկն եղեալ Յակոբ
խալիֆայն մուրհակ զրեալ, զի զինքն հետեւեալ պատրիարդ
արասցեն և օրինակ մուրհակին է այս

Ի տէր Գալուստ վարդապետէ՝ օրհնութեամբ և սիրով սուրբ Հոգւոյն
ծանիր մեծահաւատ Յակոբ բարեւեր Ամիրայ. ահա այս ձերնարկս քեզ
հարազատից, եղիցի որպէս Թէմէսիկ, որ զոր ինչ զրամ իցէ գնալոց յա-
զազս պատրիարդութեան, հոգն այն իմ պարտս է, ես հասուցից քեզ,
անթերի զրի խնով ձեռամբ:

(1800 ՌԲԹ մայիսի և իմ կնիքս է.)

Յետ այս մուրհակի մատուցման, յուսադրութիւն
դառնալ ի նոցանէ՝ եկեալ Գալուստ նուիրակն՝ հանդէպ պատ-
րիարդարանի եղեալ սենեակն, առանց ի տեսութիւն դալ
սրբազանին և ի պատրիարարդութիւն ընտրեցեալ Դաւիթ

կէն Յակոբ վարդապետն՝ իջոյց յաթոռոյ զՎալուստ արհիւն
 Յայնժամ թղուկ չարագոյն սարկաւաղն իւր՝ Պօլսեցի
 Յարութիւն, խրատ ետ նմա՝ գնալ կանգնիլ ի մէջ ժողովրդ-
 ւոցն, որ և նա մանկական խորհրդով կացեալ վեղար փիլոնա-
 ւըն ի շարս ժողովրդեանն՝ մինչև ցառաքելոյն, որով յղացոյց
 ի սիրա խուժանաց զմեծ խռովութեան առարկայ՝ և ծնան
 յաւուրն երկրորդի մայիսի 6 առանց զաջ և զահեակ նկա-
 տելոյ թէ այն դարանակալութիւնք ի կողմնակալաց յիշեալ
 Յոհաննէս եպիսկոպոսի իցեն, և ոչ յօգուտ Վալուստ նուի-
 րակի :

Եւ յաւուր շարաթու ի մէջ սուրբ եկեղեցւոյ զնուիրակն
 ի շարս ժողովրդեան տեսանող խուժանք և սրկայք յորդոր-
 եալք զնմանիս իւրեանց յերկրորդումն աւուր որ է տօն և երեւման
 սրբոյ խաչին՝ գիշերայն՝ յառաջ քան սկսանել եկեղեցական պաշ-
 տամանն առեալք զՎալուստ արհիւն ի սենեկէ իւրմէ խուժական
 աղաղակաւ ածին մեծ ին յեկեղեցին, և տեսեալք թէ Գաւիթ
 արհիւն կացեալ է յաթոռն, ասեն ցնա՝ դու պատրիարդ ըն-
 արեցար մեզ հրամայեալ կաց յաւագ եկեղեցին, իսկական յա-
 թոռ պատրիարդի և սրբազանն խաղաղութեամբ երթ իցէ
 ի սուրբ աթոռն իւր և սոյն ծերունի եպիսկոպոս կալցէ
 յայդր, զայս ասացեալ, իջուցին զնա անտի, և զնուիրակն
 կացուցեալ անդ, ապա տեսեալք թէ սրբազանն տակաւին
 ոչ է եկեալ յեկեղեցին քարշելով տարան և զԳաւիթ եպիս-
 կոպոսն ի ներքս յաթոռ պատրիարդի, հրաժարէր նա յե-
 անել անդ և նոքա ստիպէին ի նստիլ:

Մինչև լուեալ սրբազանն և հրաման առաքեաց նմա, լսել
 նոցա և ջանալ խաղաղութեամբ անցուցանել զաղմուկն զայն:

Որոյ միամտութեամբ նստեալ հրամանաց սկսել զՏէր զե-
 րազումն զի լուեսցին աղաղակ խուժանացն, բայց արք կա-
 տարեալք և խոհականք, գիտելով՝ թե վախճան այնպիսի խու-
 ժական սկսուածոյն, չար է և վնասակար անդանօր եղելոյն,
 վասն որոյ թողեալք զշնորհաբաշխ սուրբ Պատարագն՝ զնացին
 ի տունս և յայլ տեղեւ, զի մի իմէջ վտանգի գտանիցին, որպէս
 և այլոց եղեն իսկ:

Քանզի ժամանեալ եկեղեցական պաշտամունքն, ի Տէր եր-

և զինի ձայն տուեալք միմեանց (սո՛ւս սո՛ւս) հազիւ լռեցուցեալք զձայնս ճաքարաց, սկսան լերգել՝ զՓառք ի բարունան Աստուծոյ և բռնադատեալք զժամարար քահանայն, միայն յաւագ եկեղեցին զանուն Գալտին յիշատակել ետուն որպէս պատրիարգի և ինքեանք զարձեալ աղաղակեցին (Աստուած շնորհաւոր արասցէ)

Ի լրանալ այնմ աւուր պատարազին՝ բարձեալք զԳալուստ արհիւն ի վերայ բազկաց՝ առեալ տարին յառաջին սենեակն իւր՝ և լցան ի ներքս աւելի քան զերկերիւր անձինս և արտաքոյ տանն ի փողոցի՝ առաջի դրան սուրբ եկեղեցոյ, զօրք զղջկանց կազմեալ կարգեցին բանակեալ Աղէքսանդրի Մակեդոնացոյ և որք անցանել կամէին ի փողոցէն բռնութեամբ յաւելուին ի զօքս իւրեանց:

Եւ ոչ այսչափ միայն, այլ և ի տունս տունս մտեալ զարս կատարեալս և զմորուաւորս որոնէին բերել ի խուժական ժողովս իւրեանց, զի առեալ տարցին զքաղձալի Գալուստ վարդապետն իւրեանց ի դուռն տէրութեան զկեցուցանել զինլայն պատրիարգութեան:

Զայս ամենայն տեսեալ մերձակայ զազկիթից առաքելցին զերկու զուլուղս ի ջրել զխալիսուլ բանակ յիմարական ժողովոյն:

Բայց նոցա մոռացեալ զազգովի զմարմնաւոր ծառայութիւնս մոլեգնական քաջութեամբ գահալիո՞ծ առնելով զզուլուղսն վանեցին ի բաց:

Որոց մին գնացեալ ծանոյց Սէկմէնպաշին զապստամբ ժողով սրկիպիցն և նա զօրօք իւրովք որպէս զարծուիս խոյացեալք ի վերայ վարմիցն զղջկանց:

Յայնժամ որք զինքեանս անպարտելիս համարէին, զարձան երկչոտ նապաստակ, որոց զծակ մի մկան երեւէր ամուր ապաստան, ոմանք ի փախուստ խուճաղէին, իկեսք ի տունս և ի խանութսն թագչէին, այլք վարձիւք գտնելիս որոնէին և բազմութեամբք զառհաւատչեայս վաստակոցն մահալօք ընդունէին:

Եւ հասեալ համբաւ զժտութեան յսկանջս Ղայմախամ փաշայի ի գալ և նորա ծպտեալ (այսինքն թէպտիլ) առաւ

նուիրակի և տէրութիւնն առաւել զայրացեալ և ի նոցանէ զչորս անձինս ելեալ ի բանո. զայլոն չափաչար դանեալ արիւնիւթաթախ անձամբ հերքեալ վանեցին անտի:

Եւ լուեալ Գալուստ վարդապետ զանյաջողութիւն իւրոցն ինքն փախստեայ կրկին գնացեալ անկաւ ի տուն Պէկէրպէկցի Յակոբ խալիֆայի յուսալով թէ նովաւ. տակաւին ժամանել կարացեց բաղձանաց իւրոց, ոչ զիտելով ողորմելոյն թէ ըստ շաքականին սրբոց Հռիփսիմեանց, յայտնի բանիւք յանուն Գալուստի հետեիլ խոստանային և զաղտնի ջանացողութեամբ, վասն Յովհաննէս արքեպիսկոպոսի պսակ պատառաստեալ էին:

Մայիսի 13, ի լուսանայ միաշաբաթի գնացեալ յարքունուստ (Պալթաճիլար էմինի) ասացեալ զապիթն՝ հանեալ ի տանէ Յակոբ խալիֆայի յուսացուցանելով թէ պատրիարդ լինելոց ես, տարաւ ի դուռն եպարքոսի և նա տակաւին ոչ ինչ զգացեալ առաքեալ պատրաստաց զվելար, զհաւաղան և զդրամ, զի առ ձեռն պատրաստք լինիցին և այս համբաւ հասեալ առ սրբազանն զիշերայն, ոչ երբէք հաւատաց վասն պատրիարդութեան նորա, մանաւանդ երկեաւ ևս՝ մի դուցէ մահաւ վնաս ինչ իցէ զիշերայն բերելն նոցա:

Եւ զինի սակաւ ժամուց եկեալ Տուվաճի հաճի Մահմէտ էֆէնտին ի պատրիարդարանն առ սրբազանն Գանիէլ, ասաց Մեծազօր արքայն մեր առ ի բառնալ զխռովութիւն յազգէ ձերմէ զԳալուստ վարդապետն աքսորեաց (յիլիմեայ) ասացեալ կղզին և ինձ հրաման է տանիլ զքեզ (ի Պոհճատայն)

Ասաց սրբազանն, մեք ըստ մարմնոյ հոգատակեալ եմք Մեծազօր թագաւորի և պարտիմք հնազանդիլ տէրութեան նորասեղեցի կամք իւր: Եւ հրամայեալ մեզ ծառայիցս ժողովեալ զկարեօր պիտանիսն և յօժարութեամբ կամեցողքն դնալ ընդ իւր, և զօհանայր զԱստուծոյ որ եղև արժանի հալածանաց՝ առանց յանցանաց և պատճառի:

Քանզի յիշեալ սրբազանն Գանիէլ՝ երեքտասան օր յառաջ ի պատրիարդութենէն հրաժարանաց արդն յապրիլի 30 զրեալ և մատուցեալ էր տէրութեան, և յետ այնորիկ խռովութիւն Գալուստ վարդապետին սկսեալ և ոչ երբէք օրէնք է

ներսին անփոփոխ՝ հաւատարմութեամբ ձերոյ զերազանցութեան խոնարհ ծառայ վասիլի Թամարայ: Ի Պետիւկ—Տէրէ 16 մայիս 1800»:

Ահա տեսցէ ամենայն ոք թէ պաշտպան և խնդրող Յովսէփայ արհւոյ ոյք իցեն և ո՞վ առաքեալ է զսրբազանն Դանիէլ յաքսորս և որպէս երկեցուցեալ են զաչս ազգին մերոյ ոչինչ խօսիլ կամ ընդդիմանալ:

Եւ ի նոյն օր առաքեցին առ ազգն այլ իմն հրամանադիր թէ երէք եպիսկոպոսունք, Դանիէլ, Դաւիթ և Դաւրուստ ոչ լինին աստ ի Պօլիս պատրիարք, բաց ի սոցանէ զայլ ոք ընտրեալ ծանուցէք տէրութեան:

Եւ այս հրամանադիր վասն այն առաքեցուցին զազանի դարանակալքն Յովհաննէս արհւոյ, զի մի՛ ոք համարձակեցցի զիր տալ թագաւորին և զպատրիարքն իւրեանց խնդրել: Եւ կամ ի յառաջարկել Յովհաննիսեանցն. զնոյն Յովհաննէս արհւին յայտնել կարասցեն առ նա զահաճութիւն որով հնարագիտութեամբ և ի բաց վանեցին զԴաւիթ եւ պիսկոպոսն:

Իբրեւ առեալ տանէին զսրբազանն, անդ էր տեսանել զազեկիզութիւն և զարաստւս բարեպաշտ ժողովրդոց և զմորմադրումն վասն անպարտ դատապարտեցելոյ հոգևոր հօրն իւրեանց: Որոյ հասեալ ի Ղումադաւիու ասացեալ նաւահանգիստն դարձեալ յետ օրհնաց զաիեզիրաց ցանկալի քաղաքն ըզինմա բնակեալն և զազգն մեր: Ապա անկեալ զպարանոցաւ յիշեալ Դաւիթ եպիսկոպոսի հրաժարական ողջունիւ համբուրեալ զնա, յանձն արարեալ զամենեսեայնսն ի խնամա Աստուծոյ, և Դաւիթ եպիսկոպոս արտասուօք համբուրեալ զաջ նորին սրբազնութեան՝ յանդիման խուռն բազմութեան յետ որոյ մահալք ի նաւ բերկրութեամբ սրտի, յաջողակ հողմով յետ երկց առուրց մայիսի 16 ժամանեցաք յաքսորանաց տեղին (ի Տենեղոս կղզին, այսինքն ի Պօհճատայ) ընթերցեալք ի դատարանի զհրամանն, յորում ոչ ինչ փաստ ըլլովն, ընկալան մեծաւ մարդասիրութեամբ, եղեալք ի փառաւոր տան միոյ՝ ունել զելլումուտ ըստ մեր հաճութեան. և եղաք անդ մինչև սեպտեմբերի 26, սպասելով տեսն

Աստուծոյ մերոյ և յաջորդոյ պատրիարկի քրիստոնէբար մարդասիրութեան, ըստ որում յետ այնորիկ յատուկ գործ պատրիարդ կարգելոյն է հոգաճութիւն առնել փութով հանել, կամ ընդ երկար թողուլն անդ :

Յաղագս պատրիարգութեան Յովհաննէս եպիսկոպոսի Կոստանդինուպոլիս :

Իբրեւ առաքեցաւ սրբազանն Դանիէլ աքսորիւ ի Տենեդոս կղզին, ըստ վեր անգր գրեցելոյս բարձր հրաման ի տէրութենէ առաքեալք առ զլիսաւորսն ազգի մերոյ, թէ բայց երկց եպիսկոպոսաց զայլ ոք պատրիարգութեան արժանաւոր յատկացուցեալ ծանուցէք մեզ :

Վասն այսորիկ՝ քանի մի էսնաֆից միջակ անձինք թոյլատրութեամբ զլիսաւոր իշխանաց, ժողովեալք ի Վէզիրխանն, բայց ոչ ոք զլիսաւոր իշխան զնացեալ անդ, ասելովք՝ թէ յառաջագոյն ըստ հաճոյից սահաթճի Բարդուղիմէոսն և համախոհք իւր Կիւլլապօղլու Յակոբն՝ և այլք՝ պատրաստեալ և ընտրեալ են զհամանմանիս իւրեանց ի պատրիարգութիւն, զի՞ փոյթ է մեզ գնալ յայնպիսի անարգաց ժողով երթիցեն քանի մի անձինք յէսնաֆից՝ զի մի՛ ընդդիմութիւն մեր առ բարձր հրաման տէրութեան երեւացի, այդպէս նենգութեամբ եղեալ պատրիարգն և ոչ եղեալն մի և նոյն է առ մեզ : 1800 ՌՄԽԹ մայիսի 19: Որոց ժողովեալ առանց ումեք խօսելոյ՝ յիշեալ Բարդուղիմէոսն ասացեալ անդ Յովհաննէս եպիսկոպոսն որպիսի ոք է, պատասխանել Խառղիւղի տեր Պօղոսն և Ղալաթիայի աւագ երէց տէր Պետրոսն, արժանաւոր անձն է, և գիտէ՝ ըստ կամաց ամենեցուն վարիլ և այլ ոչ ումեք խօսելոյ հրամայեցին արդ զրել և խնդրել ի տէրութենէն զնա պատրիարդ Պօլսոյ որ և եղևն իսկ յայնժամ :

Այս Յովհաննէս եպիսկոպոս՝ գաւառաւ ի Պապրերթ քաղաքէ որ է Պայպուրա՝ յանձանօթ զարմէ, հայր նորա

ի Պօլիս Չամաշուրձի անուանէր. արհեստն էր քիւրքձի՝ որ յետոյ ի ժամանակի երկրորդ անգամ պատրիարքութեան իւրոյ ի մանկութեան զգաստիարակ քիւրքձի վարդետն իւր փոխանակ պարգևօք պսակելոյ՝ առաքեաց յարքունի թիոյ ծառայութեան, և թէ վարք և կրօնք նորա զնորդ իցէր, ոչ արժան համարիմ զըչաւ իմով գրել՝ յորմէ հետէ որպէս բարձրաբերձ աշտարակ բոլոր Կօստանդինուպօլսեցւոց հանապազ առաջի աչաց նկարեալ կայ և ամենայն ոք հարիւրապատիկ առաւել քան զիս գիտեն ի մէջ Պօլսոյ, միայն յաւուրս սորա յառաջ և յետ ելեալ խայտառակութիւնսն առազդ մեր՝ պարտէ ըստ առաջիկայ նիւթոյս համառօտիւ պատմել աստանօր:

Ի լինիլ յիշեալ Յովհաննէս եպիսկոպոսի պատրիարք Պօլսոյ՝ առանց աջ և ահեակ նկատելոյ, միայն զփառաց և զանձնէ իւր խորհելով՝ վերստին մի միայն ի սրբոյ աթոռոյն յանուն սրբազանին Գանիէլի եկեալ մահզարն թէ յատկապէս զնորին սրբազնութիւն խնդրեմք լինիլ մեզ Կաթողիկոս, զայն ևս անհետ առնելով՝ ձգեալ յոյսն առ Յովսէփ արհիւ կամեցաւ բարերար երևիլ նմա, զի և նա զպատրիարքութիւն նորա հաստատեսցէ զօրութեամբ այլոց, քանզի քաջ գիտէր Յովհաննէս եպիսկոպոսն թէ աղքն զնոյն ինքն երբէք ոչ կամին, և ցարդ ևս ինչորօք և կամեցողքն նման իւր աննշանք և անպիտան անձինք, առանց խօհականութեան են:

Պիտի շարունակուի:

Գ. Շ—յի. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ ՀԱՆԱՍ

1842 թիւ. օգոստոսի 12 Մաղարթու Նա-

խավկայի վանքումը :

Շարունակութիւն.*

Հասայ Թէհրան. տուին ինձ նամակներ Ահմատ խան աներոջեցս, որ գրած էր, ինձ արուզաւակ է ծնած : Վէրքիս լաւանալը, շահի առատ շնորհը և արուզաւակ ծնանելոյ լուրն, ինձ երջանկութեան ծայրն էր հասցրած իմ երեւակայութեամբը : Միայն պակաս էր ինձ շուտով վերադառնալ Ատրպատական, էնտեղ ցոյց տալ պաշտական լինելը և թշնամեաց աւարովը հարստանալս : Ընդդէմ իմ ակնկալութեան հասաւ Քիրմանու ապստամբութեան լուրն, որոյ մասին Շահն շտապով հրամայեց զօրացն չուել գնալ էնտեղ : Էն անշիջանելի փառքի և պատուի ծարաւն, որ շահի սըրտումը գոյացած և հիմնաւորված էր, ժամանակ չտուեց նրան սպասելոյ : Էս մեր ճանապարհորդութիւնը մի և նոյն եղանակաւ անիրաւութեամբ կատարվեց, ինչպէս միւսներն որ պատմած եմ : Շահի Քիրման բանակով հասնելն, կարճ միջոցումն ապստամբներին բռնելը ոմանց կուրացուցանելն, ոմանց սպանել տալն զանազան խոշանդներով (խակէնջէ) երեւելի պատմաբանի դործ է, և ոչ ծերացած, փտած լեզուիս, որոց և շատն մոռացած է յիշողութիւնս :

* Տես Կոնկան Գ. տարի. Ժ. թուումն երես 722 :

Քիրմանումը քսան օր հազիւ ժամանակ տուեց Շահն րանակին հանգստանալ, հրամայեց չուել վերադառնալ Թէհրան և էնտեղաց Ատրպատական, ուր մեծամեծ նպատակներ ունէր կատարելոյ : Մտքումը դրած էր անպատճառ պատժել նախ, Ղարաբաղու իբրահիմ խալիկամ իբրահիմ խան տիրապետողին, որ ընդդէմ Սարգսրի կամացը ասպնջական էր եղած Մամադ Սադղ խան շողաղուն, որոյ այն երկրորդ անգամն էր նշկահելն և երկրորդ, վրաստանու Հերակլ վալիին, որ երբէք չէր ճանաչում իւր հեղինակութիւնը : Թէ և ասում եր նա գնումեմ նոցա վրայ, բայց մէք չէինք հաւատում, ըստ որում ինչպէս մէք գիտէինք, նոյնպէս և շահն ևս լաւ զգումէր, ո՞րքան դժուար էր էս պատերազմն, որովհետեւ շատ անգամ Պարսկաստանի զօրաց գերեզման է եղած վրաստանու կողմերքի հողն :

Վերադարցանք Թէհրան, էնտեղ երկար ժամանակ չմնալով, շարունակեցինք ճանապարհներն իս դէպ 'ի Ղազվին : Մին օրվան ճանապարհ մնացած Ղազվին, բարձրագոյն ատենումը, ասաւ շահն, Եաղուբ խան, Աստուծով քեզ Ղազվինու քաղաքապետ եմ նշանակելոյ : Չգիտէի թէ նրա բազմաթիւ քաղաքապետ դրած չկայ : Ամենայն մեծամեծք, որք արձանացած կանգնած էին վրանի տուաջեն, զարմացած, ափշած, ընդարձացած մնացին, մինչ ես երկիր պագի և պատասխանեցի շահին, չէ, ոտիցդ հողը մոխիրը աւելի շնորհապարտ կլինի աշխարհի աղօթարանէն (ղբլէի ալամէն) եթէ սուրհանդակի պէս ուղարկէր իւր գերեզն, Ատրպատական էն երեւելի յաղթութեան լուրերն տանէ, և Ատրպատական շնորհ տանելոյ համբաւ հաղորդէ էն տեղու մեծամեծաց :

Շահն, էս իմ յանգնութեան վրայ, իւրեան բնական զարհուրելի դիմօք աչքերը չըռած ինձ կիսատ միսատ նայեց ու գլուխն քաշ ձգեց : Փոքր ինչ լռելուց յետը գլուխը բարձրացրեց 'նոյն ժանտութեամբ ու ուրիշ առարկայի վրայ սկսեց խօսալը : Մինչ պալատականք պատասխանում էին, կիսատ թողէց նոցա խօսելը վերիացաւ ու ներս գնաց միւս վրանը : Հենց ատենը արձակուեցաւ, ամեն պալատականները շատ մեղադրեցին ինձ ու զգացրի որ 'ն, բառն ան-

շուշտ շատ թանգէ արժեքը էն օրն կամ ինձ կամ միւսներին : Ճշմարիտ որ էնպէս ևս էլաւ : Կէս ժամ անցաւ չանցաւ, ներսիցը հրաման դուրս եկաւ, յիսնաչափ յանցաւորներէն, որք կալանաւոր էին, բերէին իւր վրանի առաջիւն խեղդեն կամ գլխատեն կամ աչքերնին հանեն, կամ ձեռն ոտը կտրեն : Ո՞վ կարող էր համարձակուիլ բարեխօս լինել, երբ բարկացած էր նա : Վայ էր եկած նրան, որ յանդըղնէր մինը համոզմամբ կամ թախանձանօք խօչըդոտան ընդհարա դիտաւորութեանցը և հրամանին որքան և անիրաւ լինէին : Սրա աթոռ նստելը արիւնով սկսէց և արիւնով վերջացաւ : Պարսկական զօրքը ահարկու և սարսեցուց վերջացաւ էին էն ժամանակ ներք բոլոր Ասիոյն : Նրանք բաղկանում էին փորձուած հեծեկազօրից և հեռակից, որք կրթուած էին զինուորական արհեստի մէջը, նախ երեւելի նադրի և յետոյ քեարիմ Խան Զանգի, և հիմի սոյն Աղայ Մամադ խանի կամ շահի ձեռքումը, որք փառաւորագոյնքն էին իւրեանց ժամանակի պատերազմողաց մէջը : Ուստի և սա այնքան գոռողացած էր, որ իւր զրած հրովարտակները որ տեղաց և ուր կամ ում վերայ և ընէր, ներգործական օրէնք և անհակառակելի կանոն պետք էին համարվել, ապա թէ ոչ, հրով սրով կը դատուէին արդարն և յանցաւորն, հակառակողն կամ ընդունողը : անգտնազանաբար :

Ինչ և իցէ ես երկիւղէս էն օրը վրանէս ոտս դուրս չըրի : Միւս օրը եկինք Ղազվին, որոյ բնակիչները և երեւելիները ընդ առաջ ելին մեծ պատուով ընդունեցին Շահին և բանակին : Քանի օր որ կացաւ Շահն էստեղ, նրա աչքումը չերեւցայ : Զգում էի մեծամեծները և պալատականներն ի՞նչ վշտի և անցիւթեան մէջ են եղած նորա մօտը : Ոչ ընչացան էն շնորհները և քաղցր խօսքերը որ մինչև ցայսօր լսած էի ես նրանից և միամտացած թէ լաւ ճանաչեցի նրա բնութիւնը : Այնուհետեւ էսպէս ահաբեկած և զարհուրած էի նրա երեսէն, մինչև իւրաքանչիւր ներկայանալիս մահս բերանս կգար : Երբ ատենիցը գուրս կերթայի, մինչև միւս ատենի ժամանակը մեծ ուրախութիւն էր ինձ համար հէնց ներկայանալոյս ժամանակն մօտենար էլի կսկսէի տրտմիլ, կերպաւ ըանքս կը փոխէր և ամենայն զղայարանքս կ'ողոր, ոչ ուտիլ, ոչ

խմել կգար միտքս, որպէս թէ կիսակենդան և վհատուած ոմն էի: Մինչև էն օրերը զիշեր ցերեկ, ժամանակ առ ժամանակ ինձ կուզէր մօտը, գործքեր կյանձնէր, այնուհետև որպէս աչքից ընկած միւս զօրավարները և երևելիքը տոնի օրը միայն կյայտնվէի նրա առաջին: Թէ ես, որ ծառայութիւններս դեռևս թարմ էին նրա մտքումը, հիմի մին առաւ արտաբերելոյս համար էնպէս դատապարտվեցայ, անարգվեցայ, ուրեմն նրանք, որք ապստամբված էին մին քանի անգամ, ժողովրդապետք և տիրապետողք էին և միշտ կասկածանաց տակն արդեօք, մտածումէի, ի՞նչ ողորմելի վիճակի մէջ էին:

Շատ ուշ զգացի որ ի՞նչ ժամանակ, ինձ մին քամաբախտութիւն կպատահէր, կգիմէի ջերմեռանդութեամբ դէպի քրիստոնէութեան հաւատը, նրա յոյսը ինձ կափփէր և կը քաջալերէր ընդդէմ տարաբախտութեանս: Տես որդեակ, տես, մահկանացուիս դառը կեանքը, որոյ վիշտն, նեղութիւնը, անպատուութիւնը և երկիւղն օրքան ներքգոծւած իւններ ունին նրա սրտի վրայ: Ամենայն ինչ վեր 'ի վայր են:

Կամենում էի ասել որ էլի սկսեց քրիստոնէութեան կրօնը արծարծուիլ սրտումս: Էս պատահարի վրայ խղճմտանքս անհանդարտ էր, և շատ անգամ զիշերները քունս կկտրվէր, կմտածէի մինչև լուսանալն: Ինչի՞ ինչի՞ վերայ, ես ինքս էլ չէի իմանալ: Յերեխայութեանս լսած էի, քանի քանի իշխաններ, զօրավարներ և զօրապետներ նահատակուած էին Քրիստոսի սիրոյ համար, ուրանալով աշխարհիս փառքը, մեծութիւնը, իշխանութիւնը և հարստութիւնը: Կմտած էի, մի՞թէ ես նոյննէ մեծ ոմն եմ, քաւ լիցի: Ներքեմն զլիւումս կպտպտէր ինչի՞ եմ վախենում յայտնի պաշտել ճշմարիտ հաւատս, և ինչի՞ եմ փչացնում կեանքս սնոտի փառաց համար: Ասենք թէ իմացան և հրամայեցին ինձ զլիստել, խեղդել: մին օր ծնած եմ և մին օր էլ պէտք է մեռնեմ, տասն օր յառաջ տասն օր յետոյ, Ի՞նչ զանազանութիւն պատերազմումը կամ կախաղանի վրայ կամ անկողնիս մէջը կամ դահլիճումը: Ինչի՞ եմ անմտութեամբ

կեանքս մաշուժ․ լաւ չէ արդեօք, ազքատ տկլոր, քաղցած, ծա-
րաւ մնալով, հանդաւտ, մաքուր խղճմտանք ունենալ, քան
թէ օղիտակ փառք ու մեռած՝ մոտտանջ հոգի: Մանաւանդ
հաստատուն էլ զիտէի, որ այնուհետեւ բռնաւորն վրէս ա-
ռաջվան նման շնորհք չի պետք է ունենայ, թէ և որքան
էլ աշխատեմ ու աւելի աւելի ծառայութիւններ ապացուցա-
նեմ: Միանգամ առած, իմ երեւակայացած երջանկութիւնը,
որ ունէի, դժօխացած էր ինձ համար: Չունէի առաքինու-
թեանց սկզբունքն որով միայն կզօրանայ ճշմարիտ արին:

Ղազվինու քանի մի օթեան անց էինք կացած, երբ
միւս առաւօտը ուրախութեան ձայն հնչեցաւ թէ Շահն
վճռեց էն տեղաց ուղղենք մեր չուն դէպ 'ի Ղարաբաղ և
Վրաստուն: Աներկմիտ էին ամէնն էս ճանապարհորդութեան
օգտի վերայ: Ամէնայն բանակն ուրախ էր, բայց ես տըր-
տում: Ամենեքեան զնում էի նանհաւատների— քրիստոնէից—
աւար և զերի, բերելոյ յուսով, իսկ ես լինչ յուսով: Բաց 'ի
սրանէ, լսէ որդեակ, աշխարհիս բախտի յեղափոխութիւն-
ներն: Բաց ի սրանէ ասեմ . . . անցեալ տարի էս օ-
թեաներումը չորս հազար պատերազմողաց զլիին կանգնած
անխիղճ հրամայում էի հակառակորդաց տունը, տեղը և
կայքը յափշտակել, աւերել, երբէք մաքէս անգամ չէր անց-
կենում թէ ես քրիստոնեայ եմ ծնած, իսկ էս օր՝ մի և նոյն
տեղերումը, յուսահատութիւննէս, և Շահի անշնորհ լինելոյ
համար, քրիստոնէութեան սուրբ հաւատին էի ուզում ա-
պաւինել ինձ: Են օրը թէ և անց կացրի, բայց էնքան երկար
երևաց ինձ, որպէս մին ամառվան ամիսս էէս գիշեր էր զար-
թուն պարկած կամ նստած մտածում էի, մինչ բոլոր
բանակը խոր քնումը կար խրված, ձայն տուի զանձապետ
Յովսէփին, որուն հաւատարմութեան համար, հրամայած
էի իմ վրանիս արտաքոյ սենեակումն քնէ: Ողորմելի Յով-
սէփն դողալով քնաթաթախ կանկնեց առաջիս, կարծելով
թէ բարկացած եմ նրայ վրայ կամ նրայ կառավարութեան
մէջն մին սխալանք նշմարած եմ, ու հիմի մտաբերած, որ
էսպէս ընդդէմ սովորութեանս կանչում եմ: Շատ շուտով— վա-
խում էի ուրիշ անդամների նման չլինի թէ փօշիմանեմ կամ

ամաչեմ ասելն—քաղցրութեամբ սկսեցի բանալ նրան քրիստոնէութեան վերաբերեալ խորհուրդներս և թէ ուղու՞մ եմ ծածկաբար նրանց հետը քրիստոնէութիւնս կատարել : Նա երբէք հաւատ չէր ընծայում ինձ , խան , ասեց զարմաշալով , աւելի լաւ չե՞ որ , իւրաքանչիւրս իւր հաւատի վրայ աւելը մնանք—ինձանէ հաւատարիմ ծառայութիւն պահանջէ և ոչ կրօնի զանազանութիւն կամ փոփոխութիւն : Հասկացայ նրա կասկածանքն , վասն որոյ կամեցայ երդմամբ հաւատաշէնք քրիստոնէայ լինելս : Բայց ի՞նչ երգմամբ , ի՞նչ սրբոց և սրբութեանց անուամբ կարող էի նրան հաւատաշէնքն : Որքան և երգուեցայ , ամէնն անհաստատ և անընդունելի էր նրան :

Ի վերջոյ հարցրի , ունի՞ս սաղմոս , աւետարան կամ ժամողիրք , Ունի՞մ պատասխանեց : Գնա բեր նրանցից մինը ինձ մօտ , ասեցի : Երբ գնաց բերաւ , զողջալալով ինձ տուեց , ձեռս առի սկսեցի փոքր ինչ վարժ կարդալ , հիացաւ նա և ափշեցաւ : Ել այնուհետեւ հարկաւոր չեղաւ նրան կասկածել : Իմ հրամանաւն դուրս գնաց , Գաւթի հետը վերադարձան , մօտն վրանս , լուս մուշ ծնրեցին և ձեռքս համբուրելն ուզեցին : Ես թոյլ չէի տալիս , բայց երբ սկսան յուրախութենէ հեկհեկալով լալով խնդրել , թոյլ տուի և նոցա երեսն էլ ես համբուրեցի : Օ՛հ , էնպէս քաղցր ժամի և բովայնի էլ չկարողացայ—ես հանդիպիլ , ափսոս

Արտաբերեց էս վերջին խօսքերը ալեղարդ միայնակեացը ու սկսեց լալն որպէս մին երեխայ : Ես փոքր ինչ համբուրեցի , կարծելով թէ կշարունակէ իւր պատմութիւնը , տեսայ չէ , լռեց և չէ կամենում խօսելը , վասն որոյ և վերկացայ մնաա հայր բարեաւ , ասելով դուրս եկի : Եւ նա ոչ թէ տղիցը չջարմեցաւ , այլ և զլախն ևս չբարձրացրեց ինձ նայել :

Կէս օրիցը շատ անց էր , հասայ մենաստուներ : Կրօնաւորներն տիրացուները և մօնթերը ժողովլա՞ծ գնացած էին վայրկայիքն շօջիլոյ : Միայնակեցէն լաճներս արտազրում էի , մինչև նրանք վերադարձան : Են գիշերը երկար նստեցանք զրոյ տուխոյ , և յետոյ բարի գիշեր ցանկանալով հեռա-

ցանք միմեանցից. իսկ ես կրկին նստեցայ աշխատութիւնս վերջացնել, որպէս զի վաղն կարդամ միւսանգամ միայնակեցի մօտը և սխալները կամ աւել պակասները նա ասէ ուղղեմ:

Միւս առաւօտը ուշ վեր կացայ քնէս, մինչ թէյ էի խմում. ասեց ծառայս թէ, մեր ճանապարհորդակից թուրքերն Մակուից եկան գնան Զուղու արգելանոցն, և ինձ են սպասում: Հրամայեցի ծառայիս, խնդրեց նոցա եկին ինձ մօտ թէյ խմեն: Փոքր ինչ այս այն կողմիցը նրանց հետը խօսալուց յետոյ խօսք բաց արի Ահմադ խան Մարաղեցւոյ վրայ, որոյ մասին ուղղեկիցներին մինրոր նրանց մէջն առաջնն էր, ասած էր ինձ ճանապարհին, որպէս սրանից յառաջ էլ յիշած եմ օրագրութեանս մէջն, թէ նրա սերունդէն է: Ես սիսեցի ճշդութեամբ հետաքրքիր լինել: Ասեց նա, որոյ անունը իբրահիմ Խալիլ աղայ էր, հայրս Եղաթը խան է եղած, որ աղայ Մամադ շահի յետ Շուշի բերդումն սպանւած է: Մայրս էր Ահմադ խանի դուստրն, որ իւր հօր մահուանից յետոյ ժառանգած է երեք զիւղ Մարադայ, որոնք մինչև ցայժմ ունիւմ, և ես ամուսնացած եմ Ահմադ խանի որդւոյ դստեր այսինքն իմ քեռւոյ դստեր հետը: Էս շատ հետաքրքրական տեղեկութիւնները, որք կվերաբերէին նրա հօրը, և մօրը. լսելով ստիպմամբ առանց նրանց իմացում տալոյ պատճառն խնդրեցի այն երկու օրն ևս սպասին ինձ ու միասին գնանք Զուղու արգելանոցն: Նոքա ընդունեցին իմ խնդիրքն, ես ևս իսկ և իսկ հէնց նոքա դուրս զնացին, երկուսն նման նախաձեռնիս հետս առնել տուի, գնացի դէպ ի քարանցաւն: Մտքումս դրի առ այժմսորա այսինքն իւր որդւոյ անունը չասեմ միայնակեցին, որպէս զի հոգին չխառնուի, և կիսատ չթողնէ իւր պատմութիւնը: Մինչ հասայ քարանցաւի դուռը, նախաձեռնին առի ծառայիս ձեռքէն ներս մտայ, օրհնեալ հայր ասեցի միայնակեցին ու նստայ: Նա սաղման ձեռքին, դուռին կտր կարդում էր, երբ ինձ տեսաւ դուռը բարձրացրեց ու ասեց, բարեով եկիր ու սպասուի կարդացած տեղն մօմով նշան դրաւ, խփեց ձեռքէն վար դրաւ: Էսօր միայնակեցի գէմքն ուրախ էր և ծիծաղա-

շարժ, որպէս թէ ճաշակ ունէր խօսելոյ, վասն որոյ և կըրկանեց, բարւով եկիր, բարւով եկիր, հետաքրքրութիւնդ գեռ ևս չէ յագած, ինչէ, ուղում ե՞ս շուտով սկսեմ թէ փոքր սպասեմ, մտիս է երեկեան պատմութիւնս ո՛ւր մնալն: Հարստէր, պատասխանեցի, դու ինքդ ես վկայում, ուրեմն և աւելորդ է ինձ առաջարկելն կամ խնդրելն որպէս զի շարունակես:

Հա՛ . . . շարունակեց միայնակեացն . . . Հա՛ Յովէֆին և Դաւիթն փոքր ինչ կանգնեցին մօտս, տսելի նոցա, սաղմոսը մնա՛ մօտս դուք գնացէք քնեցէք: Նրանք գլուխ տուին դուրս գնացին: Երբ ես մինակ մնայի, մին կանոն սաղմոս քաղելուց յետը, պարկեցի քնանալ: Տասն օր կար էնպէս անուշ և հանդարտ չէի քնել: Շատ ժամանակ էր զիշերները վատ վատ երազներ կսեսնէի, բայց էն զիշերն ոչ ինչ չտեսայ: Այնուհետեւ շատ զիշերներ Յովսէֆի, Դաւիթի և Մովսէս ծառայքս էին ինձ մխիթարիչք, մանաւանդ լուս կիւրակի զիշերներն: Հէնց միւս մահմեղական ծառայքս և սպասաւորներս կքնէին. սրանք կժողովէին իմ փոքրիկ վրանումը, որ կից էր մեծ վրանիս, և միատեղ կխատ պառտ կսկսէինք ժամերգութիւնը և սաէպ սաէպ ծուներ կգնէինք, որպէս թէ փոքր բարեպաշտից ժողով էինք բաղկացնում: Լաւ էր որ Դաւիթը քահանայի որդի լինելով, պատիկուց տիրացութիւն էր արած, լաւ տեղեակ էր ժամերգութեան: Իսկ Մովսէսն կարդալ չգիտէր, և Յովսէֆն զրկուեմ լաւ էր բայց ժամակարգութեանը անտեղեակ: Հէնց կվերջացընէինք ժամերգութիւններնիս, նոքա կերթային, ես անկողինս մանեւիս, էլի մին երկու գլուխ սաղմոս կքաղէի, յետոյ կննջէի: Այնուհետեւ ոչ թէ խղճմտանքս սկսեց օր ըստ օրէ հանդարտիլ և հոգիս զօրանալ, այլ և բռնաւորի երկիւղն և ահն ողնջացաւ սրտէս, որպէս թէ զերմարդկային ոմն էի եղած:

Որդեակ, ասեց միայնակեացն, որդեակ այսուհետեւ որքան որ պատմեմ տեսածներէս և զլսիս եկածներէն, ինձ քաջ յայտնի է, ինչպէս քոյ սիրտը վշտացընելոց և մորմաքեցնելոց են, էնպէս էլ ինձ յիշատակ Աստուածային արդա-

բուժեան պատժելոյ և խրատելոյ այն կեանքումն :

Միայնակեացն ասեց ու քանի մի բովոյե լռելից յետոյ վեր առաւ , մտիս չէ քանի օրումը հասանք Արդավիլ և էն տեղացւորացի ամին : Էս տեղ տասն օր կացանք . մինչև բանակն կարողացաւ Արազն անց կենալ : Մտանք Ղարաբաղի և Նուխայ հողըն , ինչպէս մօրեխա : Եւ կարող էր դէմ դնել անհամար խուժողութ և բարբարոս զօրականաց առաջինն : Ո՞ր զօրականի կերածն չէր արևնախառն : Ի՞նչ արդեօք , քաղաք , դիւղ էինք մտնում , կամ մօտովն անց կենում ու չէինք աւերում , բնակիչքն թէ մահմեկականք լինէին թէ քրիստոնեայք , մեզ համար մի և նոյն էր , նոցա կայքն ամեն զօրական , որոնց վերջին էր անգամ , իւրն էր համարում : Ամենայն օր թէպէտ տիրապետողներից և երևելի կալուածատիրոջներից ընծաներ էին գալիս Շահին , այսու ամենայնիւ ոչ ինչ չէին օգնում նոցա հողի վերայ բնակչաց աւերմանը : Քանի հազարաւոր գերի քրիստոնեայք . . . քրիստոնեայք եմ ասում , մի՞թէ բաց ՚ի Հայոց ազգէն , ուրիշ մին քրիստոնեայ ազգ կար էն տեղանք : Քաւ լեցի : Ողորմելի Հայերն անտէր անտէրունչ . . . հա՛ , Հայք էին մեր գերիքն : Շատ անգամ երեսուն տարեկանէ ի վեր , ուր որ պատահում էին , եթէ չէին խոնարհւում և յանձնւում , սրոյ ճարակ էին լինում . իսկ փոքրերն , մատղաշներն , երեխայքն , աղջիկունքն , նորաստակ դուռնիկ հարսներն գերի վարված ուղտերի և ջորւոյ վրայ բռնաբարձ քորչէին գալիս բանակի քամակէն : Թէպէտ երբեմն երբեմն աղատել տալիս էի , նոցանէ իմ ծառայից անուամբն օրպէս հաւատակիցք , ոմանցը սրան նրան խնդրելով , ոմանցը բարեկամաց միջնորդութեամբ , ոմանցը փողով—բայց քանի՞ հոգի—համարեա՞ հարիւրին մինն էլ չէր լինել : Թաղաւորների գանձերն չէին բաւականանալ էնքան գերիքն աղատելոյ համար : Էս կողմիցը աղատում էինք , ճանապարհ ձգում , հեռացնում բանակէն , միւս կողմէն կըրկին բռնում էին շատ ողորմելացը բերում : Բանակն էնպէս սրիւրուում էր , որ մին ծայրէն մինչև միւս ծայրն երկու օրվան ճանապարհ , երբեմն երեք օրվան ևս կլինէր : Աղատուածներին չէի կարողանում երկու օր պահել , որովհետեւ , թէ մեզ համար ուտելիք , դժուար էինք գտնում , նրանցը ինչ անէինք : Ի վերջոյ և ես անճարացայ , դրամի պակասու-

Թեհէն չկարողանալով ինձ ու իմայնոցն պահել, հրաման
տուի ինձ յանձնուած Ատրպատականայն, որք մինչև էն ժա-
մանակն եթէ աւար էին անում, ծածուկ էր, այնուհետև
ոչ թէ Պարսից նման զերի, այլ ուտելիք, կայք և չորքոտա-
նիք աւար անեն: Չկարծես թէ էն ողորմելեաց ողբն ու ա-
ղաղակն չէր հասնում Շահի ականջն: Երբէք փոյթ չէր
նրան էնքան ողորմելեաց արտասուքն, արդարութիւնը և իրա-
ւունքն չէր գրած նրա զրբունմն: Ղարաբաղու և Նուխլույ հո-
ղի սահմանումն էինք, մինչ երևանու տիրապետողէ եկած
գեսպանի հետը, եկած էր և մին եպիսկոպոս Կաթուղիկոսից
ուղարկած ընծաների հետը և ինձ վերայ ևս գիր ունէր Կա-
թուղիկոսէն: Ինքս նոցա ահով գողով ներկայացրի Շահին,
հրովարտակ առի, յանձնեցի նոցա և շուտով վերադարցրի:

Եահն տիրապետողների ընծայաբեր գեսպաններին յայտա-
նում էր թէ եթէ ինքեանք տիրապետողներն չներկայանան զըր-
կուած են տիրապետողութիւնից: Պարտաւորվեցան ամենայն
գեսպանները շուտով յայտնել իւրեանց մեծերին: Վեցեր-
որդ կամ եօթներորդ օրը, մինչ զեռ Ղարաբաղու հողու-
մըն էինք, տիրապետողաց գալստեան սկիզբն յայտնուեցաւ,
և հետըզհետէ գալիս էին բայց ինչպէս տեսած եմ, դար-
ձեալ միմիայն Ղարաբաղու Իբրահիմ խանը և վրաստանու
Վալին համարձակուեցան նշկահել Շահի հրամանին: Առա-
ջինը յուսալով Շուշի անառիկ ամրոցի պնդութեանը և իւր
ժողովրդոց քաջութեանը, հիւանդութիւն պատճառ բերելով,
ընծայ էր ուղարկած և հպատակութեան գիր, իսկ երկրորդն
միամիտ գալով Կովկասու լեռանց բարձրութեանը, անտա-
ռախտ տեղերի կիրճերին, և ձմեռը, որ շատ հեռու չէր
էն օրերէն, ոչ ընծայ և ոչ հպատակութեան գիր էր առաքած:
Գեանջու տիրապետող Ջովադ խանը, որ միշտ ոտի տակ էր
մնացած վրաստանի և Ղարաբաղի երկու սրտակից բարեկամ
տիրապետողներէն, և երևելի հայկազն Մելիք Մէջլումն,
որ Ղարաբաղու տիրապետողէն խռոված, քանի մի տարի էր
Գեանջայ կնստէր իւր ժողովրդով, ամէնից յառաջ սրանք
էին եկած Շահի դուռը: Նոցա չգալոյ վրայ ժամանակ գտան
և ևս զրգուել Շահին և ապացուցանել թէ նոքա երկօրեանը

ևս, այսինքն Ղարաբաղու և Վրաստանի տիրապետողները ծածկաբար վաղուց է գաշնակից են չճանաչել քոյ Շահու-թիւնը: Էս եղելութիւնը աւելի ևս էն ժամանակն տեղի ունեցաւ Շահի սիրտն զրգռել, մինչ քանի մի օր Ղարաբաղի և Գեանջայու հողումն զօրքն ցրուած և ինքն Շուշուայ մօտ նստած, քննեց տեսաւ անմատչելի է գղեակն և շատ ժամանակ պէտք է կորցնէ, և թերևս չի էլ կարող առնել, վասն որոյ և անցաւ գնաց դէպ ի Գեանջայ, ուստի և գնացը էր Վրաստանի վերայ և էն տեղաց փրադառնալիս Ղարաբաղու խանին էլ պատժէ ու վրէժխնդիր լինի: Վրաստանի հարստութեան և մանաւանդ բնակչաց գեղեցիկութեան համբաւն շուտով շատացրին Ջավադ խանի և մեղք Մէջլումի խորհրդին կողմնակիցները:

Գեանջայ էինք, երբ բանակի կողմիցն երևելի զօրավարներն խնդրամատոյց եղան Շահին թէ, արդէն մեր գերիքն մեզ ծանր բռնեք են, ի հարկէ Աստուծով Վրաստունը աւերելիս ևս գերեւոյ ենք, էն ժամանակն անկարելի է մեզ էնքանին հացով կշտացնել, մինչ շատ անգամ պատահում է հիմի մեզ էլ է պակասում ուտելիքը, ուրեմն հրաման տուր էս պատրաստ գերիքն ուղարկենք Արազն էն կողմն, ուր որ կնշանակէք, մնան էստեղ, մինչև մեր վերագառնալն: Էս շատ լաւ միջոց էր և Շահին, որպէս զինախ բանակն թեթև լինելով, շուտով կշարժէր, երկրորդ աւարի յուսով զօրականներն կքաջանային: Ջավադ խանը լաւ տեղեակ ընկելով Ղարաբաղցւոյ քաջութեանը, խորհուրդ չտուաւ նրանց հողովն ծանրութիւնը ճանապարհ ձգել, ասելով, չլինի թէ ինքն իրրահիմ խանը դուրս դայ բերթէն ու խլէ, վասն որոյ լաւ է, պարտաւորել Նուխայ և Շամսիւայ խաներին, որ սրանք իրանց հողովը ու զօրքովը տանեն անցկացնեն Արազն ու հասցնեն Արդաւիլ, և թէ էս եղանակաւ, Շահի բանակիցն էլ զօրական չի պակասովի: Նուխայ և Շամսիւայ խաներն իրանց հպտակութիւնը աւելի ևս հաստատելով համար, խոստացան խրեանց ձիանքովը, ջորիքովը և ուղտերովը կատարեն Շահի էն հրամանը:

Գերիքն ճանապարհ ձգելուց յետը չուեցինք դէպ ՚ի

Գեանջայու բերդու կամերէք օրից աւելի չկացանք: Աշնան սկիզբն անձրեւային էր, երբ բանակը Գեանջիցն շարժեցաւ: Որքան Զաւարդ խանի հողումն էինք, առատ էր պաշարն, բայց մինչ մտնիք Վրաստանի հողը, այնուհետեւ ո՛չ թէ բնակիչները դուրս էին գնացած գիւղօրէից մէջիցը, նաեւ գիւղօրէից մէջի խորը յարդը ևս երած էին, ուստի շատ նեղութիւն էին կրում բոլոր զօրքն:

Սկիզբն ամենայն բանակն շատ ուրախ ուրախ էին գնում գէպ ի Վրաստուն, բայց մինչ մտանք նոցա հողն, ահա օր ըստ օրէ թուլացնում էր մեր սիրտը: Զանազան լրտեսների բերած համբաւներէ լսում էինք, իբր չերակ խանը քառասուն ցլիսուն հազար Կովկասու լեռնականներէն ժողոված է զլիւն և ամենայն կրճերը բռնած, և թէ մտադիր է յետ կուսէն ընկնիլ մեր վերայ: Առնականաց անունը ստատիկ ահ էր ձգել պարսկական զօրաց մէջը, որք շատ անգամ վտանգուած էին նոցանէ: Զէր մոռացուած Նաղիր շահի խորտակուած վերադառնալն Կովկասականաց զօրքերէն: Շահն երեք մասն բաժանեց իւր բանակն, միջինը ինքն վեր առաւ, առաջինը և վերջինը ուրիշ զօրապետների յանձնեց:

Մուացած եմ գետի և կամրջի անունները, ուր մեր յառաջապահ զօրքն հանդիպած էին մին քանի հարիւր Վրացի զօրականաց, որք պահապան էին կամրջին: Մինչ մեր բանակի սկիզբն հասնելը վրացիքը քաջութեամբ կռուած էին, բայց բանակի ծէրն տեսած րովպէին յիսնաչափ մեռեալ և վերաւորեալ թողնելով, փախած էին: Կամուրջն, որ մէն նեղ ձորի մէջն էր ընկած և էս էն կողմն բարձրացած բլուրներն՝ բաւականին ամրութիւն էին տալիս նրան, մեր բանակն առանց ընդգիմութեան անցաւ էն կողմն, և գետն զէպ ՚ի վեր բարձրանալով փոքր ինչ, մին ծառաւէտ դաշտի վերայ գետի ափնումն բանակեցաւ: Էս գիշեր որպէս Շահն նոյնպէս և բոլոր բանակն կասկածանաց մէջն էին, կարծելով թէ Հերակը մեզ վերայ կարիլի է յարձակուի, ըստ որում մեր բանակի տեղն էլ շատ անյարմար էր: Թէ և չորս կողմն ընկաւ մինչև լոյսը զոյշ պահապաններ էին կարգուած:

Միւս օրն չուեց բանակն, իջաւ մի մեծ առու ի վրայ

ուր չորեք կողմի գիւղօրէից մահաճախան տանուներէն կամ կալուածատներէն քանի մի հոգի եկին ընծաներով իւրեանց երկրպագութիւնը մատուցանելոյ Շահին : Սրանք ընկան բանակի առաջն որպէս ուղղեցոյց : Բանակը ծանր շարունակելով իւր չուն , չորրորդ օրը հասաւ Քիֆլիզուց մին և կես փարսախաչափ հեռաւորութեամբ մին դաշտ և կուր գետի ափնումն բանակեցաւ : Միւս օրը մտքումս լաւ չէ, ինչ օր էր : կարծեմ երկուշաբթի կամ կիրակի լինէր, եղանակն մառախլապատ էր, երբ բանակը սկսեց չուել դէպ 'ի Քիֆլիզ : Մեր ձախակողմն ընկած էր բարձր և երկար լեռան մինչև Քիֆլիզ, և լեքն ձորերով և հովիտներով, որոց մէջին, ինչպէս լսում էինք, շատ Լէզգու և Վրաց զօրք էին թաղւած : Իսկ կուր գետն ընկած էր մեր աջակողմեանը, և գետի միւս ափը, որ հարթ հաւասար դաշտ թէ և եղանակն ամպոտ էր, բայց էլ մեր աչքումը շատ լաւ երևում էր, որ ձոր, վումէր մինչև Քիֆլիզ, ուստի և շատ գիւրութեամբ կարելի էր բանակը տանել, եթէ կուր գետի վարար ժամանակն չէր եղած և կարողանայիք անց կենալ էն կողմն : Ահա՛ էսպէս, անձուկ ճանապարհն, որով անց էինք կենալոյ, մին կողմն լերան բարձրութիւնը և շատ տեղ պատնէշներով և զօրքով ամրացած. միւս կողմն կուր գետն աչքերնուս առաջններկայացած յորդութեամբը, մեզ ստիպում էին կարծել թէ անկարելի է արդարև Քիֆլիզը առնուլ : Հա՛ մոռացայ ասել, որ Շահն առաւօտը շատ շուտ քանի մի ձիաւորով գնացել նայել, քննել էր ճանապարհներն ու հրամայել յարձակուիլ գնալ դէպ 'ի քաղաքն :

Մեր բանակի տեղէն կէս կամ աւելի ևս ժամաչափ քալելուց յետը, հասանք անձուկ ճանապարհի կամ կրճի բերանը, որ կուր գետի աջակողմն էր և մեր ձախակողմը : Էնտեղ բարձր լերան ծայրի վրայ Վրաց զօրքն մին պատնէշ մէջ պնդացած կային : Սոցա բաւականին ուժ բերինք, բայց տեղերնիցը չչարժեցան, մինչև քանի մի թնդանօթ հրամայեց շահն յառաջ տարին, ու սկսեցինք նոցա վրայ կրակել, նոքա չկարողացան էլ մնալ տեղումը, զուրս եկան պատնէշէն գնացին լեռան գլխներովը երկու ձիոյ ասպարէզ բա-

ցականութեամբ, մաին երկրորդ պատնէշի մէջը, որոյ առաջին անցնելոյ տեղը այսինքն ճանապարհը աւելի անձուկ էր և պինդ քարկապ: Սորա առաջին մին դաշտ կար փոքրիկ, ուր կարելի էր մեր բանակի տանն երրորդ մասն զետեղել, բայց պատնէշի հետը կռուելոյ համար, հազել թէ երկու հազարական զօրականք կարողանային շարժել իւրեանց զէնքերը: Որպէս ասեցի, մին կողմը կուր գետն, և միւս կողմն անմատչելի սեպացած քարերից լեռներ, որոյ վերայ շատ զօրականք պատրաստ հրացաններն ձեռքերնուն կային և մեծ արգելք էին լինում մեր զօրականացն պատնէշի վրայ յարձակուելոյ: Կարելի է մին ժամ աշխատեցինք, չկարողացանք մերձենալ նոցա պատնէշին, ընդ հակառակն մեզանէ կարծեմ հարիւրաւորք ընկան: Շատ անգամ, կարելի է ասել, միշտ, յուսահատութիւնն է, որ ստիպում է մարդոյն նոր հնարք որոնել և նրանով իւր նպատակն յառաջ տանել:

Շահը տեսաւ իւր զօրաց վտանգը և անմատչելի պատնէշը, որոյ նմանը ասում էին առաջնունուս դեռ ևս շատերը կան, յառաջ կանչեց յառաջընթաց զօրաց սպարապետին ու հրամայեց անշարժ էն կիրճն պահպանէ ու զգոյշ կենայ լերան գլխի վրայ ցրուած Վրաց զօրքի յարձակուելոյն, և ինքն իւր ձիոյ զլուխն շուռ տուաւ դէպ ՚ի կուր գետն, ձայնեց, ով որ շահի զլուխն սիրում է և աղամարդ է, գայ շահի քամակիցը. թէ կուր գետն ինձ տանէ, գոնէ դուք աշխատեցէք դիակս բռնէք տանէք Ղում թաղէք: Ասեց ու տակի թուրքմանի ձին մտրակեց, կուր գետի մէջը: Էս անցանելոյ տեղը, մեր կողմի գետի ափը՝ գետը հաւասար էր, բայց գետի միւս կողմը, քարափներով բարձրացած, ուր ելանն լն ամենադժուար էր: Առանց սպասելոյ, մերձ երեք հազար հեծելազօր հետևեց Շահին. յորոց մինը ես էի քանի մի հարիւր հեծելազօրօք: Շահն երբ մերձեցաւ միւս ափին, կարծեմ նոր ՚ի նորոյ նշմարեց որ անկարելի է երկվարին դուրս գալ էն քարափների զլուխը, վասն որոյ ձիոյ զլուխը դէպ ՚ի վայր շուռ տուաւ, ուր փոքր ինչ ՚ի վայր մին տեղ կար. կարելի էր էն տեղաց դուրս գալը, հասաւ էստեղ ու դուրս եկաւ ցամաքը: Որպէս առաջինը դետը մըտ-

նողը Շահն էր, նոյնպէս և միւս կողմը դուրս եկողը առաջինը նա ելաւ : Ի հարկէ երկու, երեք հարիւր բշտի ձիաւորք գետումը խեղդուեցան, ըստ որում չկարողացան էնպէս միւս ամբը դուրս գալ, որ հաւասար էն ցածրացած տեղին հասնեն :

Երբ Շահն դուրս եկաւ ցամաքն, բարձրացաւ մին փոքրիկ բլրի վրայ, կանդնեց նայեց անցողներին ու հէնց անցողներին վերջը կտրուեց, ձայն տուաւ ակոռապետին իւրեան համար երկու երիվար ևս անցկացնէ գետը : Քանի մի ըովպէ ժամանակ տուեց հեծելազօրին հանդստանալ, և յետոյ ծանր ծանր ծանր յառաջ քշեց ձին գննելով, քննելով Վրաց պատնէշները, որք պարզ մեզ երևում էին և Թիֆլիզու տնէրիցը ևս մին մասն տշքերնուս առաջին էր :

Վրաց պատնէշափակ զօրականները, տեսնելով Շահի զետը անցանէն և հետզհետէ ստուարանալն անցնող հեծելազօրաց, և յառաջ գնալն դէպ ի վեր գետն, և էն տեղ հռն լինելն, որ նոցա յայտնի էր և Շահին ոչ, և մանաւանդ Շահի ձեռնով առնելն սպարապետին, որպէս զի պատնէշի վրայ բռնն զօրութեամբ յարձակվի, կարծելով Վրացիք թէ Շահն քամակիցն իւրեանց փակելոց է իսկ և իսկ թողին իւրեանց պատնէշն ու վերադարձան դէպ ի Թիֆլիզ և միացան երրորդ պատնէշում փակուած զօրաց հետը :

Շահն տեսնելով նոցա փախուստը, կամեցաւ վերադառնալ որպէս զի կրկին գետի անցկացած տեղովը միանայ իւր զօրաց հետը : Քանի մի հաւատափոխ Վրացիք, որք մեր բանակումն էին, յառաջ եկին, եկրիրպագութիւն տուին, Շահին ու աստցին, էս մօտիկ տեղումն վերեն, այգեստանը որ երևումէ, նորա մէջիցը աւելի ևս լաւ հռն կայ, ուր կուրն երկու է բաժանվում, էն տեղաց առանց նեղութեան կարող է բռնաբարձ զրաստն անգամ անց կենալ : Շահն գովելով հետեւելոց հաւատարմութիւնը և քաջասրբ տուրիւնը մտրակէց ձին հասանք հաւատափոխ Վրացւոց ասած տեղը, ու շատ դիւրութեամբ անցկացանք հռնովն : Քանի մի ըովպէ սպասեցինք, մինչև հասան զօրաց սկիզբը, ուր և մնացին հեծելազօրքն, իսկ հետեւակքն յառաջընկան : Տես-

նուժ էինք առաջերնուս ևս երկու պատնէշ , աւելի զօրեղ և
ամուր քան թէ անցկացածներս ու տեսածներս : Բայց երբորդ
պատնէշն—որոյ վերայ ինքն Հերակլն էր հրամանատար , և
մօտ էր մեզ , միայն մին փոքրիկ ձոր և այլիք էին բաժա-
նում մեզ նորանից—շատ հզօր էր զօրքով և խնդանօթներով :
Այն ինչ էն փոքր ձորը զօրքի մասն անց կացաւ . միւս
կողմը , որ փոքրիկ տափարակ տեղ էր , յանկարծ այդինների
զլխիցն ու ձորիցն երկու բաժանուած հազարաւոր հեծե-
լազօրք , և էնքան էլ հետևակք որոց հարմանատուն որպէս
խնայանք յետոյ , Հերակլն երէց որդին էր , դուրս եկաւ մեր
զօրաց շղթայն կտրէ , և բուռն յարձակմամբ մեզ վերայ
ընկաւ : Մեր հեծեւազօրն շատ յետ էր մնացել , և ընէր
ևս մեզ մօտ , ոչինչ չէր կարող շինել տեղւոյ անձուկ լի-
նելոյ համար : Էս նորա դուրս գալն մեզ մեծ վտանգի մէջ
կձգէր , եթէ սպասել էր և ևս փոքր ինչ , որ մեր բանակի մեծ
մասն անց էր կացել և չէր պէտք իւր զօրքը երկու բաժա-
նել , որ իրանց ուժն չկորցնէր : Էս նեղ տեղն մեծ կոտո-
րած եղաւ մեզանէ , առաջերնուցս Հերակլն , մէջիցն որդին :
Շահն յառաջ գնացած զօրականաց մէջն էր , և ընդարձակ
տեղ ունէր շարժելոյ բայց քիչ էին իւր զօրքն , ընդ հա-
կառախն մեր վերջից եկողների տեղն շատ նեղ էր , բայց զօ-
րքը շատ և չէին կարողանում շարժել , վասն որոյ և էնպէս
առանց ներգործութեան կար զօրականաց մեծ մասն :

Մեր յետամնաց զօրքի սպարապետն , որ Խօրասանցի
էր , լսում է ընծայ բերող տանուաէրներէն թէ այգեաց վե-
րելիցն կարելի է թափվել ձորի մէջից դուրս եկած Վրացի
զօրքի վրայ , վասն որոյ և շուտով քանի մի հարիւր ձիա-
ւոր է վեր առնում , բարձրանում է այգեքանց գլխիցն գայ
թշնամեաց վրայ , մինչ մեր անկանոն հետևակներն ևս
մտնում են այգեաց մէջովն հրացան դառտալուժ վրաց
հեծեւազօրաց վրայ , որք տեսնելով փոքր փոքր շատանում
են այգեաց մէջի զօրականներն , յետ են դառնում փախ-
չել : Հերակլն էս նոցա փախչելուցն անտեղեկ լինելով , պատ-
նէշն մօտի բլրերի վրայ զօրականներիցը արշաւիլ տուաւ Շա-
հի վրայ : Շահին միայն էն էր հարկաւոր , այսինքն Հերա-

կէին բլրերի վերեւիցն ներքեւ իջացնել մին հնարքով : Պատերազմն եղաւ հասարակական և անձրեն սկսեց շաղիլ : Էս միջոյին հրացանի գնդակով Շահի հեծած ձին վերաւորվեցաւ , վասն որոյ նա էլ փոխեց երիվարն ու հրամայեց հետեւել իւրեան ու արշաւել Հերակլի վրայ : Սա էլ չկարողանալով դէմ կենալ , շատ մարդ կորցնելով մտաւ պատնէշն : Իսկ որդին երբ փախաւ ու բարձր ձորերի հովիտներէ մէջը մտաւ մեր ձախտկողմիցն , հրաման զրկեց շահն ինձ , իմ ձիաւորովն նորա յետնէն գնալով , երբ տեսի սարերի գլխովն շառ եկաւ դէպ 'ի աջակողմն , Թիֆլիսի վրայ , և երկիւղ կրելով թէ գիտութեամբ է փախչում , վերադարձայ , տեսայ քանի մի թնդանոթ ձեպով բարձրացրել են իմ անցկացած տեղերի բլրների վերայ ուստի մեծ վնաս էին տալիս Հերակլի պատնէշին : Էս պատերազմին որպէս ականատես մինչև ցայսօր զարմացած եմ , թէ ինչպէս էր , որ մին հին ապարապետ որպէս Հերակլն , էնքան անձուկ կիրճերը և ամուր տեղատեղը առանց զօրաց էր թողած : Թէ և շատերն պսում էին թէ , կային զօրք ամենայն տեղ դրած , բայց որդւոց և մեծաւ մեծաց մէջը հակառակութիւն լինելոյ համար , թողին ու փախան : Էսպէս կամ էնպէս ժամաչափ ժամանակ կաւարողացաւ Հերակլն զիմանալ մեզ իւր պատնէշի առաջին , և յետոյ դուրս եկաւ , ոչ թէ փախստեամբ այլ կռուելով մտաւ չորրորդ պատնէշի մէջը , ուր մին ժամ կացաւ չխցաւ , փախչելն գերազանցեց : Շատ նեղ էր և անձուկ ճանապարհն , որ գնում էր դէպ ի քաղաքը , և երկու կողմերն էլ այդ իջ էին : Շահն չհամարձակեցաւ իսկ և իսկ հետեւել փախչողներին , այլ կես ժամաչափ համբերեց , մինչև յետամնաց զօրքն ևս միացան շղթայի պէս , շարունակեց ուղին դէպ ի քաղաքն : Փոքր ինչ յառաջ գնացինք և ահա քաղաքն առաջերնուս , երևեցան եկեղեցիքը , տալարանքը , բնակաց տները և բաղնիքները , որոնք մին մին կարելի էր թուել :

Մտիս է , հէնց հասանք բաղանիքների մօտը , հարիւրաւոր մահմեդականներ քանի մի մօլլայ առաջերնուն զուրաններ ձեռքերնումը , ոչխարներ մատաղ բերեցին ու շահն

ձիոյ ոտի տակին զոհեցին : Ետեղ մին փոքրիկ նեղ կամուրջ կար , ուստի Շահն հէնց անց կացաւ իւր մեծամեծներովը զօրավարները էլ չկարողացան զսպել զօրականացը , որք մասն մանր մուկն փողոցները և ցրուեցան քաղաքի մէջը :

Շահն , առաջնորդութեամբ քանի մի երեւելի տեղացի մահմեդականների , զնաց իջաւ Հերակլի պալատումն , գրեթէ երկու հարիւր աւազանի և ծառայք չէին մնացած մօտը , հնպէս էին ցրվում ամէնը քաղաքի մէջը աւարի և կողոպուտի համար : Շատ մեծամեծներ մնացին Էտեղ ձիանց վերայ կանգնած , ըստ որում ծառայքն թողած էին իւրեանց տէրերնուն և մտած երկրացւոց տներն : Գիշերն շուտ վրայ հասնելով և բարակ անձրեւ գալով , շատ բնակչացը առիթ եղաւ փախելոյ , Այսու ամենայնիւ մնացելոց ճիճն , աղաղակն , լացն երկինքն էր հասնում : Մինչև լոյսը զօրականները պարապ չէին իւրեանց անիրաւութիւնները դործ զնելլուցն :

Միւս օրն կէսօրին մօտաւորան նստեց Շահն , ամենայն աւազանին զնացին իւրեանց երկրպագութիւն մատուցանեն ու շնորհաւորեն հնպիսի մեծ յաղթութիւնը , որոյ համար հրապարակաւ առեց , ես մերձ յիսուն երեւելի յաղթութիւններ եմ արած , բայց ամէնից մեծն էս էր : Զաւագ խանը ատենումը ներկայացրից Շահին քսան զոռարիկ աղճիկներ և երկուստսան տղայք տասն տասներկու ամեայք որոց արտասուելն և հեծելն մարդոյ սիրան էր մաշում ու մորմորում :

Մինչ դուրս եկինք ատենիցը պալատի տանեաց վերայ տեսանք մօլլէն Ազան էր տալիս , քանի մի հոգի բարձրացանք տանիքն , ուստի զննելինք Թիֆլիզի դիրքն : Ողորմելի տեսարան ներկայացաւ աչքերնուն առաջը եկեղեցիքանց և հոյակապ տներից դուրս եկած բոցն , ծուխն , զօրակաների և գերիքանց աղաղակն , հնքան սաստիկ էր , որ կասէիր տօնաւաճառումն էինք :

Աւարը էն աստիճան էր յանդգնացրած զօրականներին , որ ի՛նչ դք չէր ուզում հղատակել իւր մեծին : Տասն և մին օր կացանք Էտեղ , ամենայն օր նոր նոր միջոցներ էին

մտածում աւերման, յափշտակութեան և զերութեան համար : Տների , եկեղեցեաց յատակներն էին փորում , որպէս զի դարաներ գանէին , ինչպէս և զտան շատերը , որոց մէջն երեւելի և հարստագոյնն էր Հայոց եկեղեցւոյ դարանը , ուր քսանաչափ սանդուկներ լիքն ոսկեայ սկիով , խաչով , խաչվառով , զիպակ և թանգաղին եկեղեցական զգեստներով , զոհարներով զարդարած գաւազաններով և թաղերով բերին Շահին ընծայ* :

Պաշարներնիս պահասութեան համար դուրս գնացինք Թիֆլիզու . ոչ թէ մին յաղթական զօրականներ , այլ որպէս կանայք , բանակ չէր , կանանոց էր . կասես թէ բանակի մէջն աւելի կանայք և երեխայք կային քան թէ զօրականները : Ո՛չ միայն Թիֆլիզը , այլ և նրա շրջակայքը անպատ դարձրին : Շահն մտադիր էր , որպէս ասել եմ , վերադառնալ եկած ճանապարհովը Շուշույ խանին պատժելոյ համար , բայց Ղարաբաղու լերինքն ու սարերն խոչընդոտն էին նրան . մանաւանդ ձմեռվան վերահասնիւն , որ էն կողմերը շատ շուտ կսկսի : Ատեան կողմեց , խորհուրդ տեսաւ , ամէնը հաստատեցին Շահի չղնալը Ղարաբաղու ճանապարհովը : Սուլէյման խան Սարգսրը և Յիւսէյն Ղուլի խան Դումբուշին էլ հրաւիրած էին մեծ ընծաներով : Շահն գնաց Թարվեղ քանի մի ժամանակ կենայ էնտեղ :


Բանակը չուեց գէպ 'ի Երևան : Էս լուրն երբ լսած էին բնակիչներն , ցրուած գնացած էին լեռնակողմերն , և մեք

* Էս Թիֆլիզը աւերող ներքինի Աղայ Մամադ խանից յետը Շահ Էղա նրա եղբոր որդի Ֆաթալի շահն : Սրա որդին էր Մելիք Ղասում միրզէն , որոյ կինն 1845 թուին եկաւ թարվեղ իջաւ մին այգում վրանների տակին : Ես նրա և նրա ամուսնոյ հետը դուրս ունենալով , գնացի տեսութիւն : Ինձ ընկալաւ այս բամբիչ տիկինն իւր վրանումը , Հրամայեց զահվայ բերին և զալխան : Ղահվից յետն երկու զալխան բերին , մինն նրա և միւսն ինձ համար : Մինչ քաջումէի զալխանն նրա հետը խօսելով կամ ուշադրութիւնս նրան դարձրած , երբէք չհայեցի զալխանի ինչ տեսակ լինելն : Երբ քաշեցի , վերջացրել էի , ուղումի և ծովան դատարկել , ձեռս տարայ զալխանի զլուխն վերառնալոյ , զգացի մին այլ կերպ մեծութիւն և ծանրութիւն , որ ոչ մին զալխանի զլուխն երբէք

սնց էինք կենում դատարկ գիւղօրէից մօտովն և ինչ շունչ ունեցող կենդանի էինք տեսնում, խլում յափշտակում էինք, և ցուրտ լինելոյ պատճառաւ գիւղացւոց տների առաստաղները, գերաններն էին մեզ տաքացնողքը :

Ձմեռնամուտ էր հասանք Թարվէզ : Երևան, Նախիջևան և Մարտիգ աւերակ թողնելով մեր քամակումն : Մեր էստեղ իմացանք, որ Շահն թիֆլիզումն էր լուր ստացած Խօրասանցւոց ապստամբվին, վասն որոյ և չուզեց Ղարաբաղովքովն գնալ, որպէս զի չուշանայ, լճէ և ասելով հիւր եմ գնում սարգարին, մեզանէ ծածկել էր : Փոքր ժամանակ մնալով Թարվէզ չուեց գնաց Թէհրան : Ես և իմ հաորաշրեալ հեծելազօրքն մնացինք Ատրպատական :

Պատի շարունակութի



նչ էն ծանրութիւնը և ոչ էն մեծութիւնը ունէր : Ազատաւորն էնպէս շուտով առաւ զալիանը ձեռքիցս, որ էլ չկարողացայ նշմարել անդամ : Երբ երկրորդ անգամը զալիան տուին, ես ուշադրութիւնս ձգեցի նրա վերայ, լաւ նայեմ, թիւնչ—էս զալիանի չորս կողմն Քրիստոսի չորս անօրէնութեանց պատկերներն, այսինքն Ծննդեան, Մկրտութեան, Խաչելութեան և Յարութեան, ամենանուրբ միտայ արած և որպէս խրաքանչիւր չորս կողմն էր անդամանդով, նոյնպէս և զալիանի վերայ և ներքի կողմներն բոլորակ շինած նոյնպէս քարից զարդարած : Տիկլինն չաղրի այսինքն ծածկոցի տակիցն նշմարելով իմ այս ուշադրութեանս զալիանի գլխի վերայ, հարցրեց ճանաչդ զալիա քի : Այո, պատասխանեցի, բայց ասացէք ինդրեմ, ուտից է էս ձեր ձեռքն ընկած : Դրան, ասաց տիկլինն, երբ ես պատկուեցայ, Յաթալի շահն հրամայեց խաղինիցն հանեցին թիֆլիզու բերած աւարիցն ու ինձ երես տնտուք տուաւ, անս իմացիր ուտից է ընկած իմ ձեռքս : Դ. Շ.

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ*

ԲԱՐՔ ՈՒ ՎԱՐՔ

ՅԼ Հազիւ թէ երեսայքը մի փոքր խելահաս կլինին և տհաճ դայեակ ու դաստիարակ իրար կանց կենան, որ նրանց բարքն ու վարքը ուղղեն ու երկար բարակ խրատ ու յորդոր տալով երեսայքը ունայն տեղ կշարչարեն. թէ և նոյն նպատակին համար ոչ թէ կանոն և ատենաբանութիւն, այլ բարի օրինակ և վատ ընկերներին հեռու կենալը բաւական է. վասն զի երբ երեսայքը կգիտեն թէ յարգ և համարում են ստանում նրանք, որ ուղիւ վարք ունին, իրանք էլ հպարտութիւն են զգում այն բարի օրինակին հետեւելու: Բայց եթէ անհոգութենէ երեսան մարդու առջև դտակ չէ հանում, բարեւ չէ տալիս կամ շնորհալի կերպերէ զուրկ է, մի պարոն դասատու խիոյն նոյն թերութեանը կարող է դարձանել և նոյն բնական հաստութիւնը որնոր «մօտաւէր» մարդիկ կոչուածիւն են անուանում, սրբել նրա վրայէն: Եւ որովհետեւ չկայ մի բան, որ երեսանց այնքան փոխադարձ վատահոլութիւն տայ և իրանցից մեծերու հետը մի խօսակցութեան առիթ բանայ որքան պարզ, կարծում եմ որ նրանք կարող լինելիս պէտք է պարել սովորին, վասն զի, թէ և պարն արտաքին շնորհալի շարժումներն վարժութիւն է, միանգամայն, չգիտեմ ինչպէս, դրդիւ է տալիս

* Տես ամսագրոյս Դ. տարւոյն Բ. թ. ու մը, Երես 154:

երեխանց արիական վարժունք և մեծ խորհուրդներ ունենալու* : Սակայն բնաւ չեմ հաւանիլ, որ երեխայքը չարչարեն ունեղեն քաղաքավարական մանր մունր և աննշան կէտերի համար :

Ս'ի տրտմի'ր դու երբ քո երեխին վրայ տեսնում լինիս այնպիսի պակասութիւններ, որ տարիքն առնելով անհետ կլինին : Ուստի քանի նա փոքր է զեռ ևս դրսուանց ճշտութեամբ քաղաքավարութեան կանոնների չհետեւելուն հոգսն և հ'նհնուքը մի' ունենալ, հապա ջան'ի դործ զիր, որ նրա մտքին մէջ քաղաքավարութիւնն արմատ ձրգէ և այս է ամէնէն կարեւոր բանը : Եթէ միանգամ նրա փափուկ սիրտը պատկառանք, սէր և ահ զգայ ծնողաց և դաստիարակների համար և յարգ ու բարեսիրութիւն այլոց համար, այն ժամանակ նոյն զգացմունքը կուսուցանեն նրան, թէ ո՞րն է սրանց բացատրութիւն տալու ամէնաընտիր կերպը : Սակայն կարի հարկաւոր է բարեսիրութեան սկզբունքը սովորութիւն

* Ամէն հին աղբերի, նոյնպէս և Հայկազանց մէջ, պարզ նշանաւոր և էական մի խաղ էր, որ յաղթանակի, հարսանիքի յուզարկաւորութեան և տարւոյն երկելի օրերը հուշակելու համար ի պատիւ չաստուածներու, սրնդի թմբկի և վինի ձայնով, այր, կլին և օրիորդ կատարում էին հրապարակաւ, մանաւանդ Յունաց և Հռովմայեացոց մէջ այնքան ծաղկած էր պարը, որ սպականում էր և հիմա էլ Չինաց և Հնդկաց կրօնական արարողութեանց էական մի մաս համարելի է : Չրադաչտական ժամանակումը Հայք էլ ունէին իրանց աղգային կրօնական պարը, սակայն չընկաւ համեստութեան և անմեղութեան սահմանն դուրս, ինչպէս յունականը և հռովմէականը : Յոյն իմաստասէրք և բանասիրք ոչ միայն իրանց աշակերտների պարել պատուիրում էին այլ և իրանք էլ պարում էին ինչպէս Սոկրատեսի սիրական պարն էրա՛մբիրոս անուանածը, որ պարզ և առանձնակի խաղ էր. կռեն նա և որ Սոփոկլէս բանասիրան երբ Մալամիրի յաղթութեան լուրն առաւ նոյն առթիւ կանգնուած յաղթական արձանին չորս դէնը սկսաւ պար քաշել : Քրիստոնէութեան ժամանակ մեր մէջ պարը միայն հարսանիքի և հրապարակաւ հրճուանաց ժամանակի պահեցին, ինչպէս որ Խորենացին ասում է : « Եւ մեք փութապէս դիմեալք ի Բիւզանդեայ յուսայաք հարսանեաց պարել : Ծ. Թ. :

դարձնել . երեխանց յարգանք համարում և նրանցից ծագած ա-
մէն օգտակար բաները նրանց առաջը դնելով . իսկ եթէ նոյն
սկզբունքը յարատե գործադրութեամբ նրա մոքին մէջ մի ան-
գամ ապաւորուին բնաւ էլ մի վախճնար : Պիտի նայիս որ նրան-
ցից յետոյ խօսակցութեան զարդը . արտաքին շնորհալի և ա-
նոյշ կերպերը ժամանակին կը հասնին, միայն թէ արու և էգ
սպասաւորներից կամ ծառայներից նրան հեռի պահես և
մի բարեկիրթ դատախարակի խնամակալութեան յանձնես զա-
ւակդ :

Եթէ երեխայք մի անգղուշութիւն անեն և դու էլ
տեսնես որ հպարտութենէ և կամակորութենէ չէ ծա-
գում, աչք խրիւր և համբերութեամբ տար : Սակայն եթէ
իրանց գործը կրից պտուղ է, իսկոյն վերոյիշեալ ճամբով
պարտաւորես ուղղել և դարման ճարել : Քաջ միտ զիր որ երե-
խայքը քաղաքալարական կերպերի վարժ անելը մի երկրոր-
դական բան է ասելովս, չեմ իմանար՝ որ երբ նրանց դա-
տողութիւնը հասունացել է նոյն վարժութիւնը զանց առ-
նես : Շատ փափաղելի կլինէր եթէ մի երեխայի խելքը հա-
սունանալիս նրա չորս գէնը խոհեմ և բանիրուն մարդիկ գըտ-
նուէին, որ նրան ի բարին առաջնորդեն : Իմ միակ դանդա-
տըս այն է, որ այս մասին թիւր և մոլոր ճամբայ չբռնուի՝
տեսնումես որ շատ անգամ երեխայք բարուց և քաղաքա-
վարութեան վրայ դատաւած չլինելով, երբ մանաւանդ օ-
տարաց առջև դուրս կգան և անշնորհ բան կանեն, իսկոյն
նրա զլիւին խրատ, սաստ և յանդիմանութիւն են թափում :
Թէպէտ և այս կերպ վարժիչների միտքը ազան ճամբու-
բերել է թուում և ամօթով չմտալու՝ զիտմամբ կրակ ու
լաց են փչում խեղճուի և փոքրիկ երեխանց զլիւին և յանցանքը
նրանց վերայ են դնում որ իրանք անմեղագործի դուրս գան * :

Իսկ երեխայք այսպիսի յանկարծահաս և անպատեհ

* Այս անճարակ եղանակը Հայոց թէ տանց և թէ դպրատանց մէջ
սովորական բան է : Ինչո՞ւ . վասն զի երեխանց բնաւորութիւնը և դատա-
տախարակութիւնն ինչ լինելը չգիտենալուց կը ծաղի : Անյարմար և ան-
պատեհ ժամուն երեխանց երեսին, բերնին կուտան, կփռվին, կը պտան և
տակի երեխայքը բարկութեամբ և անհամբերութեամբ, այս երկու չար կրից

խրատներէն մտղի չափ օգուտ չեն քաղել : Սորվեցնել պարտ է նրանց յառաջուց և յարմար ժամանակին և չէ թէ յանցանք դործելիս , թէ որ բանն է վայելուչ : Վասն զի ամէն վայրկեան նրանց սաստ և պատիժ տալով բան չէ կարելի սորվեցնել , նա մանաւանդ զրգուլում և տանջվում են : Ինչպէս հնարաւոր է որ մի երեխայ չնորատուած վատ բանից զգոյշ կենայ . ցոյց տուր նրան ճամբան և եթէ իրանց բնական և մանկական պարզութենէ կամ դանդաղութենէ բուժեն զժուարին դռնես , լաւագոյն կլինի եթէ թողուս մի փոքր աճին հասակով և այնպէս վարժին , քան թէ անդադար նրանց անտեղի խրատներ տաս : Թէ որ երեխան լաւ ընկերներէ հետ ընկերակցում և մեծանում է և արդէն ներքին մարդավարական սկզբունքը ստացել է , արտաքին կոշտութիւնը տարիքը առնելով և դիտելով ինքը կարող է ուղղել իսկ եթէ վատ ընկերութեան միջումը կենսավարում է , աշխտորհիս ամէն կանոնադիրներն ամէն տեսակ պատիժներն , կարող չեն լինիլ նրան բարեկրթելու : Այս ճշմարտութիւնը լաւ ըմբռնիր որ ինչքան ուսում և կրթութիւն , յորդոր , խրատ ու պատիժ տաս նրանց , այնքան աղէկեցութիւն չեն առնել , որքան նրանց ընկերակիցների բարքն ու վարքը : Երեւոյք , (նա ևս մարդիկ) աւելի յօժարութեամբ օրինակին են հետևում : Մենք ամէնքս էլ մի տեսակ , դամէկիօն ենք որ մեզ մօտ եղած բաների դոյնը կառնենք , ո՞ւր մնաց երեւոյք , որոնք իրանց տեսածն աւելի լաւ են հասկանում քան թէ լսածները :

Կը վարժեցնեն իրանց օրինակովը , քան թէ զգաստութեան : Ուրիշին առջև մի երեխի սաստելով ուղղելու պակասութենէլ վատթարագոյնը նրա սրտին մէջ կը ծնցնես , այն է քինապահութեան և ատելութեան ոգին : Միանգամ որ մի երեխայ ուրիշների առջև մի անվշտ խօսք հանեց բերնէն , խոյն նրա հայրը մի ապտակ խբեց նրա երեսին : Տղան պատ դառած ասաց հօրը , իմ խօսքս եթէ մի ապտակի է արժանի , քու ապտակդ քսանի է : Ծ. Թ. :

Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

62 Արդէն ծառաների արած մի մեծ վատ բանը երեխանց երբոր իրանց շողքորթ խօսքերով ծնողաց յանդիմանութեան տպաւորութիւնը և նրանց իշխանութիւնը տկարացնում են յիշեցի արդ կմայ խօսիլ ելեխանց կրած մի աւելի մեծ վատ բանի վրայ որնոր աւելի ստորին կարգի սպասաւորներու վատ օրինակները կը նգունին :

Աշխատիր ըստ կարի բոլորովին հեռացնել նրանք այնպիսի ընկերակցութենէ . վասն զի վատ բարքն ու վարքը միշտ տարափոխիկ է և այնպէս շուտով կպչում է երեխանց փափուկ մտքի վրայ որ նրանց թէ քաղաքավարութիւնը և թէ առաքինութիւնը խանգարում է : Շատ անգամ անկիրթ կամ ստահակ ծառաներից այնպիսի լեզու , այնպիսի վատթար խաղեր և մօլութիւններ կը սովորին , որ եթէ նրանց հետ չհաղորդակցեն երբեք չեն կարող գիտենալ :

Տարակոյս չունիմ որ շատ դժուարին բան է այս վատ բանին դէմն առնել : Ստուգիւ փառք տալ պէտք էս Աստուծոյ եթէ զաւակներիդ մատաղ սիրար մի կոշտ և մօլի սպասաւորի ձեռքը չէ ընկած . սակայն կրկին կպատուիրեմ որ այս մասին բոլոր ճիշդ թափեա , որպէս զի երեխայքը մինակ ծնողաց կամ փորձուած դաստիարակաց ընկերութեան մէջ պահուին : Ուստի նայի՛ր որ նրանց ներկայութենէ չխորշին և չզարհուրին և նրանց առջև անհանդիստ և նեղի մէջ չզընտնուին , վասն զի եթէ բանտի պէս փակուին մի ժամ առաջ նրանց մօտից ազատուելու միջոցը կփնտռեն , թող ուրեմն իրանց հասակին յարմար ազատութիւն և համարձակութիւն վայելն : Միթէ հնարաւոր է արգիլել նրանց որ երեխայ լինին , խաղ խնտումանեն երեխաների պէս և անխայել կամ մի վատ բան չանեն . ապա թէ ոչ նրանց վայել է տալ կատարեալ ազատութիւն : Այսպէս ծնողաց ընկերութիւնը տղոց քաղցր բերելուց յետոյ , պէտք է որ ամեն լաւ բան նրանց առջև և նրանց ձեռովն ընդունեն : Սաստիկ արդիւնէ հարկ է որ

ծառայք չի գգուեն նրանց գինի , միրգ , խաղալիք և ուրիշ բաներ տալով , որպէս զի նրանց ընկերութեան հետ սէր չկապեն :

Մինակ ընկերութեան բառը այս տեղս յիշատագրելուց յետոյ , գրիչս գէնը գցելս գալեա է որպէս զի չնեղացնեմ քեզ այս նիւթիս վրայ : Որովհետեւ մի ընկերութիւն կարի մեծ ազդեցութիւն ունի քան ամեն տեսակ առակներ , կանոններ և հրահանգներ , կարծում եմ որ լիովին աւելորդ , և ընդունայն է երկարօրէն ճառել այլ բաների և նոյն իսկ այս խնդրոյն վերայ : Վասն զի ահա դուն պիտի վեր կենաս ասես ինձ : Ուրեմն ի՞նչ անեմ իմ երեխան թէ որ անդադար տանը պահեմ , վախենամ որ զլիսիս վերայ մի զաւազան դառնայ , իսկ եթէ դուրս հանեմ , ինչպէս կարելի է պահպանեմ նրան կողիտ և մոլոր օրինակներից , որ ամեն տեղ հիմա անցուկ նորաձեւութիւններ են , իրաւ է որ իմ տան մէջ թերեւս անմեղ մնայ իմ երեխան , սակայն միշտ մի և նոյն ընկերութեան մէջ նոյն դէմքերը տեսնելով աշխարհս պիտի չի ճանջնայ և երբոր դուրս էլ դայ երկչօտ կամ ինքնահաւան մի արարած պիտի գտանայ :

Եւ ես չեմ ուրանալ , որ այս երկու եղանակից ամէն մէկը իր վտանգն ունի : Իրաւ է որ եթէ մի երեխայ դուրս վարժատուն է դնում , աւելի ժպիրհ , աւելի վառվռուն , աւելի հնարադետ կլինի իր հասակակիցների հետ և իրարու բարի նախանձաւորութեամբ աշխոյժը և ճարտարութիւնը կաւելնայ , սակայն մինչև որ մի վարժատուն չի գտնես , որուն վարժապետը աշակերտաց վարուց և բարուց վրայ կարի ուշադիր լինելուց զատ իր հոգատարութեան փորձը կարող լինի ցոյց տալ տղոց միտքը առաքինութեան , վարքը բարեկեցութեան և նրանց լեզուն այլ և այլ լեզուների վարժեցնէ , տղադ չես յանձնել ապա թէ ոչ պէտք է խօստովանիս որ բառադիտութիւնը մեծ յարգ ունի աչացդ առջև , երբոր Յունաց և Հռովմայեցւոց լեզուները զուակիդ սորվեցնել տալու դիմամբը զանց կառնուս այն բարեմասնութիւնը , որով նոյն մարդիկ այնքան երևելի և քաջ հանդիսացան , և նախադասիւ ես համարում նրա անմեղութիւնը

և առաքինութիւնը վտանդի մէջ դնել քան թէ նրան մի փոքր յուներենէ և լատիներէնէ զրկել * : Վասն զի պատանիներն որքան անվհերութիւն և աշխոյժ ստանան իրանց դասակցաց հաղորդակցութեամբը, դարձեալ այնպիսի կոշտութեան և անճարակ վստահութեան դրոշմը ի կրուցրեն, որ նոյն անվայել և անխոհեմ կենսաղափարական կերպերը մոռանալու և իրանց հագած պղտոր դոյներն կրկին լուսնալու պարտական պիտի լինին, որպէս զի գերադոյն սկզբունքները և պատուարժան մարդու վայել կենցաղադիտութեան անդի տան : Ով որ դիտել է թէ որչափ հակառակ է մի բարեկենցաղ, դործօն բանկրոտ մարդու ճարտարութիւնը աշխարհիս մէջ վարժարանի պատանեկաց խակութեան բանաստիճանութեան, և բըռնահարութեան հոգւոյն, անտարակոյս համոզուած պիտի լինի, որ մասնաւոր դաստիարակութեան թերութիւնները նախադաս համարելի են քան թէ վարժարանական մի քանի յառաջադիմութիւնները և թէ նա աւելի պիտ ընտրէ զաւակին անմեղութիւնը և համեստութիւնը անարատ իր տանը երբև իրան գոգումը վստահութեամբ պահել, քաջ ճանճնալով նոյն յատկութեանց յարդը, որ նրան պիտանի և յաջողակ մարդ անելու միակ միջոցն են : Բայի սրանից կարող է մէկը ասել կամ կասկածել որ առանձնութեան և ամօթխածութեան մէջ կրթուելով իրա աղջկունքը աշխարհէս անդետ և անճարակ կանայք պիտի լինին :

1 Այս թերութիւնս մեր կողմնը աւելի ծանր է ու ողբալի, զլիաւորապէս մեր կացութենէ և երկրորդ շատերը դաստիարակութիւնը կրթութիւնէ դանաղանել չգիտեն : Հայք ստիպուած են իրա իրանց ստրկական կացութենէ քանի մի լեզուներ սովորել, սակայն բնաւ պարտաւոր չեն իրանց դասընդ վտար հասակումը օտարաց դպրոցը զրկել ազգային դաստիարակութիւն չի տուած : Այս ընթացքով ազգութիւնը արմատաքի կը խլեն ու անձնական շահու, արտաքին դարդի կզոհեն նրանց : Ուստի չեմ կարող ասել որ կամաւ դադդիախօս կամ այլախօս Հայ մարդ դարձողը առաքինի և պատուաւոր կրնայ աուել : Կամաւոր օտարապաշտին փոխ առած չըսարը, սովորութիւնը, որքան վայելուչ, լեզուն սրբան բարակ լինի, խելքը որքան մեծ, դարձեալ անարբելի մի աղտ կրում է ճակտին վերայ, որ է անհաւատարմութեան և ազգութեան թեւաւորութեան մի աղտ, որ ամէն տեղ քամահերելի է, Ծ Թ.

Երբոր պատանիք աշխարհ դուրս կգան, իսկոյն նրանց հաղորդակցութիւնը վայելուչ համարձակութիւն ազդում է և նրանց վրայէն ի՞նչ բիրտ և անսանձ յատկութիւն որ կոյ սըրբում է: Վասն զի արիւթիւնը և հառապամտութիւնը, ըստ իմ կարծեաց կոշտութեան և անկրթութեան մէջ չեն կայանալ:

Առաքինութեան ստացումը աւելի դժուարին է քան թէ աշխարհային զիտութեան, և եթէ մի պատանի այն կորուսանում է հաղիւ հաղ վերջը ձեռք է ձգում: Երկչոտութիւնը և աշխարհային տգիտութիւնն որ անական դաստիարակութենէն ծագած թերութիւններ են համարում, ոչ նրա անհրաժեշտ հեռանքն, և ոչ թէ ստուգիւ այնպէս կերեւին, անդարմանելի չարիքն են: Այս երկու չարեաց ամենէն անթեքելին և վտանգաւորն է, մոլութիւնը որուն դէմ անվրէպ կանխաւ զինել պէտք է և թէ մասնաւորապէս պատուէր եմ տալիս, որ տանը կուռքի պէս թոյլ հեղգութեամբ և միամտութեամբ չի պաշտես և չհարստարարես պատանիքը, նպատակս է զլուսւորապէս առաքինութեան սէրը և որպէս զնրանք տկար բնաւորութեան տէր դառնալով աշխարհս նոր մտնելիս իբր նորեկ համբալիներ շուտով մի մոլի ազդեցութեան և ապականութեան որս չի բռնուին: Մի պատանեակ հայրական տունը և դաստիարակի պաշտպանութիւնը թողելուց առաջ, պէտք է որ հաստատամտութեամբ կորովանայ, մարդիկը փոքր ի շատէ ճանջնայ, որպէս զի իր առաքինութիւնը պահպանէ և փորձանաց դէմ դնելու ազդու մի կամք ունենայ, երբոր մարդիկ իրանց թիւնալի և վտանգաւոր խօսակցութեամբը նրան անել ճամբու կամ մասհաբեր անգունդի առաջնորդել կամենան: Եթէ վտանգ և փորձանք վերնային պատանեկի մի ամօթխածութիւնը և աշխարհային տգիտութիւնը ուշադրութեամբ և կանխաւ ուղղելու հարկ չէր մնար: Խօսակցութիւնը մեծ մասամբ դարմանում է այն պակասութիւնը և եթէ այս բաւ չէ, այն ժամանակ անհրաժեշտ պարտ է նրան տան մէջ մի քաջ դաստիարակ մատակարարել: Վասն զի դիպուոր ժամանակին նրա արխական կերպարանք, և ինքնավստահութիւն տալու

փոյթ և ջանք տանելով, ուղու մենք նրան առաքինու թեան մի անթափ վահան տալ, երբ ինքն իրան առաջնորդը դառնա աշխարհումս :

Ուստի մի մոլար զրութիւն է պատանեկին անմեղու թիւնը զօհել, նրան անկիրթ և մոլի պատանեկաց ընկերութեան մէջ ձգելով, որպէս զի անձնապատանու թիւն և փոքր ինչ ճարպիկութիւն և հնարադիտութիւն սովորի, թէպէտ և ըստ ինքեան նոյն համարձակութիւնը և ինքնիշխանութիւնը պէտք է դործածել իր առաքինութիւնը անարատ պահելու : Վասն զի, միտ զի՛ր, որ գլխովին կորած է որդիք, եթէ մի անգամ իր անձնապատանութիւնը կամ խորագիտութիւնը մոլութեամբ խառնուի և իր անկանոն և թիւր վարքին ու բարքին օգնական լինի. այն ժամանակ կամ պիտի բռնապատեա նորէն հանել և սրբել վրայէն իր ընկերակիցներէն առած յոռի բարքը և կամ նրան գլխիվայր իր կարտեան պիտի մատնես : Պատանեակները մարդոց հետ ստեպ խոսակցելով անշուշտ վստահութիւն կրնան ստանալ, և այս բաւական է : Մինչև այն կէտին՝ համեստութիւնը և հնազանդութիւնը կարևորագոյն են իրանց կրթութեան համար, ուստի ծայրագոյն հնար և ջանք գործ զնեն լուրջօրէ է առաջուց նրանց համարձակութեան մէջ վարժեցնելու : Մի միայն առաքինութեան և բարի վարուց սկզբունքը նրանց սրտին և մտքին մէջ տնկելու աշխատանքը մեծ է, և անհնարին ժրութիւն, հսկողութիւն և ժամանակ պահանջում են նրա ճաշակից անպատճառ պարտաւոր են ճաշակել, որնոր յետոյ հեշտութեամբ չի ստացուիլ : Այս և այս միայն կանխագոյն նրանց հայթայթելու սրբական պարտականութիւն է : Վասն զի, երբ պատանեակք աշխարհիս մէջ դուրս են գալի, իսկոյն հաղորդակցութեամբ իրանց հմտութիւնը և վստահութիւնը կրկնապատկում են, թէ և նոյն միջոցին թերևս իրանց առաքինութենէ մի մաս ևս կորուսանում են : Արեմն, որպէս զի այս բանս չափազանց իրանց սրտին մէջ առաքինութեան արմատը կարի խորունկ բռնած պէտք է որ լինի : Պատանեկաց հաղորդակցութեան և խոսակցութեան յար և պատշաճ միջոցը ո՞րը, և ե՞րբ հասուն և յարմար է նրանց,

ուրիշ տեղ պիտի նկատենք և քննենք : Սակայն երբ զաւակդ մի շատ ստահակ մանկանց մէջ թողնում ես և էնտեղ խաղու մէջ կ'ուելիս և զնդակ գցելու ժամանակ նենգել սովորում է . ի՞նչ պէս յետոյ մարդավար , խօսակցութեան և գործի յարմար մի անձ կրնայ դառնալ , ես չեմ կարող հասկանալ . իսկ թէ վարժատան մէջ ամէն կողմէ գումարուած խաղակից տղոց գումարտակէն ինչ տեսակ դիտութեան և բարի հանդամանաց ուսում յուսալի է որ նա ստանայ , և որնոր մի հայր այնքան իր զաւակի համար փափագում է , անհնար է ինձ գուշակել :

Ո՞վ որ կարող է մի դաստիարակ պահել տունը , հաւաստի եմ որ իր որդւոյն ընտրելագոյն վարմունք , աւելի առնացի տեսիլներ և միանգամայն դեղեցկին և արժանաւոր բաների համըն ու ճաշակը , բայց ի դիտութենից ու ուսումից , աւելի շուտ մարդկութեան շէն շնորհն կը հայթայթէ նրան , քան թէ որ և իցէ դասակից և վարժապետ վարժատան մէջ : Երբէք չի կարծուի , որ այս մասին վարժապետը պարսաւել է գիտաւորութիւնս , կամ նրա պաշտօնին պատկանում են , կասեմ , նոյն վարժութիւնը , ամենակին ոչ : Կարի մեծ է զանազանութիւնը նոյն տան մէջ բնակող երկու կամ երեք աշակերտաց և դպրատան վեր վարը բռնող հարիւրի չափ տղոց մէջ : Վասն զի որքան ճարպիկ , աչալուրջ և հնարագետ լինի մի վարժապետ , անկարելի է որ յիսուն կամ հարիւր աշակերտն իր անմիջական անդուլ հսկողութեան ներքեւ պահէ և ոչ ակնունելի է նրանից այլ ինչ , բայց միայն դասատուութիւն : Մեծ և յարաւե մտադրութեան և զննութեան կարօտ լինելով նրանց մտաց շարժումները և գնացքը , և մասնաւոր գործադրութիւն ամէն մի տղի վերայ , որնոր հնարաւոր չէ բազմաթիւ խմբի մէջ . սակայն դիցուք թէ մի վարժապետ իւրաքանչիւր երեխին պակասութիւնը և ծուռ յօժարութիւնը քննելու և ուղղելու կարողութիւնն ու ժամանակն ունենայ , դարձեալ ապարդիւն կ'մնայ իր տքնութիւնը , երբոր տղան քսան և չորս ժամին մեծ մասը ինքն իրան կամ իր դասակցաց տիրական և տարափոխիկ օրինակին է թողուած :

Սակայն շատ հայրեր գիտելով ստէպորյանդուն և խռովարար մարդկան բաղդն է յաջող և օգնական , գուարթա-

նուժ են քանի տեսնեն որ իրանց երեխայքը շուտով համար-
ձակ և ձեռներեց են լինում և այս յատկութիւնքն իբրև բարեգու-
շակ մի նշան են առնում, այնպէս են թողրելով թէ նրանք ժիր
և յաջողակ անձինք պիտի լինին և նրանց ընկերակցաց խա-
ղըն, դաւն ու խաբը վերադանց կատարելութիւն և միջոց
համարում են աշխարհումն կենսադազիտութեան և բազդա-
շինութեան արհեստը սորվելու :

Սակայն թող ներեն ինձ ասելու որով որ իր որդւոյն բազդը
առաքինութեան և կատարուն կրթութեան վրայ կհիմնէ, միայն
անվրէպ և ապահով ճամբայ բռնած է : Նրբեք վարժակից
տղոց մէջ անց կացած խաղերն, խեղկատակութիւնները և
նրանց խաբեբայութիւններն կուտու թիւններն չեն, կամ միտախն
մի այլի կողովտելու համար իրանց լարած վարպէտ դարաններն
չեն, որ յաջողակ մի մարդ կատարաստեն և կշինեն, այլ
մի միայն արդարութեան, վեհանձնութեան և չափաւորու-
թեան սկզբունքն են : Խոհականութեան և ճարտարութեան
հետ միացած և այս բարեմասնութիւնները, ըստ ինձ իրարմէ
չեն սովորիլ վարժատան տղաք : Իսկ եթէ տանը կրթուած մի
պատանեակ նրանցից աւելի բան չէ կարացել ուսանիլ, ասել
է թէ նրա հայրը մի վատ դաստիարակի է ընկել : Վեր առ մի
պատանի քերականական բարձրագոյն վարժարանէ, նոյնպէս և
նրա հասակակից իր հօրը տունը պէտք եղածին չափ ուսնալ մի
ուրիշ պատանի և ընկերութեան մէջ եսկուսն էլ դէմ առ
դէմ զիր . յետոյ լաւ դիտէ թէ նրանցմէ ո՞րը աւելի առնա-
ցի կենցաղ և օտարաց հետ խոսակցելու վայելուչ և վստահ
հարմաձակութիւն ունի : Նոյն պահուն կրնամ տեսնել եւ որ
դպրավարժ պատանեկին վստահութիւնը կամ պիտի կազի կազ
քայլէ կամ իրան ամթաճար պիտի դուրս հանէ : Իսկ եթէ
այն վստահ համարձակութիւնն երեխանց հետ խօսակցելու
միայն յարմար է, լաւագոյն կլինէր որ բնաւ չունենար :

Եթէ ընդհանուր գանդատանաց հաւատ ընծայինք, մո-
լութիւնն այնքան շուտ շուտ մեր օրերումը քայլում ու վրայ է
հասնում և այնքան կանուխ մեր երեխանց սրտերի մէջ տը-
մատ է ձգում, որ անհնարին է պահպանել մի պտանեակ նոյն
տարափոխիկ ախտէն, թէ որ նրան դուրս բազմութեան մէջ

Թողնուս և զիպուածի և իրա յօժարութեանը յանձնես, որ իր ընկերակիցներն ընտրէ: Մօլութիւնը ի՞նչ չարագէտ զիպուածով այս վերջին տարինն եւ մեր մէջ աճեցաւ և սրու ձեռքով այսպիսի անպտրտելի տիրապետութիւն ստացաւ, այլոց պիտի Թողում գնենք: Փափագում եմ միայն, որ ամէն տեղ այս սերունդիս մէջ քրիստոնէական բարեպաշտութեան, առաքինութեան և աւանդուած դիտութեանց և զարգացմանց ահաւոր կործանման վրայ ողբ և բողբ հանդերձն, յուշաբերին և յաջորդ սերունդը նոյն կործանմանէ ազատելու միջոց փնտռեն: Ես այս զիտեմ խորին համոզմամբ, որ եթէ սրա հիմունքը մանկանց դաստիարակութեան մէջ չի հաստատենք ամէն ուրիշ փորձ և վաստակ անօգուտ են և եթէ նորաբոյս տղոց անմեղութիւնը, չափաւորութեամբ և ճարտարութեամբ խնամք չի տորուին և չի պատսպարուին ծաղրելի է յուսալը որ յաջորդ սերունդը այն առաքինութեան, հնարագիտութեան և դիտութեանց դանձերը պիտի բերեն ի միասին և որ ցարդ Անդղիան պանծացուցին աշխարհիս առջև, չի յուսանք նաև որ պիտի նրանք ունենան այն արիասրտութիւնը որով կը պարծենանք մեր Անդղիացւոցս բնատուր ժառանգութիւն է: Ի՞նչ որ ներկայումս ծովային պատերազմաց մասին լսումենք, տեղի է տալիս ինձ ասելու, որ շուայտութիւնը մարդիկը քաջութենէ ձգում և լլկում է: Վասն զի երբ մի անգամ վախճաշտութեան պատուոյ զգացումը խանձել է ու փոտել, արիութիւնը նրա ետեւէն երկայն չի ապրում: Եւ անկարելի է երևում ինձ գտնել մի ազգ, որ ժամանակաւ իբրեւ պատերազմական, ահաւոր արի և զօրաւոր մի ազգի համբաւը հանելուց յետոյ, նոյն շահատակութիւնը նոյն ճակատը ցոյց տայ, թէ որ արդէն ապականութեան որոմները նրա ծոցումը մանեկով կտրդի և մարդի կապերը քակել և մեղրութեան յետին ծայրն են հասել:

Ուրեմն առաքինութիւնը, ու մի միայն առաքինութիւնը պէտք է պլինդ պահել ու բռնել իբր մի զժուարին և անդին մաս դաստիարակութեան, և չէ թէ ճարպիկութիւնը և մանր մունր կեղծ ու պատիր ձեւերը: Առաքինութեան ետեւէն պէտք է որ գնան որ և է նկատմունք և կատարելութիւն: Այս է միայն անխախտ և բեղմնաւոր բա-

բօրու թիւնը, որուն վրայէն դաստիարակները քարոզ և խօսք տալով պէտք չէ որ տնց կենան, այլ դաստիարակութեան ճշմար և արհեստիւ նոյն միտքերը ընուն, կազդուրեն և կապեն. ու չի դադարուին այն հսկողութենէն, մինչև որ պատանիք նրա ճաշակը չառնուն և իրանց բոլոր զօրութիւնը, փառքը և երջանկութիւնը նրա վրայ չհիմենք :

Առաքինութեան զգացումը քանի խոր արմատ ձգէ այնքան հեշտիւ դուռ է բանալու ի կարգին այլ ամէն կատարելութեանց : Քանզի իմ որ առաքինութեան հպատակ և աշակերտ կլինի, բնաւ դէմ կամ անփոյթ չկենալ սորվելու իրան կարևոր և վայելուչ բաները. ուստի երբ հնարաւոր է ձեռք բերել և ըստ պատշաճին ի գործ ածել նախադաս համարում եմ մի քաջ դաստիարակի ներքև և հօրը աչաց առջև պատանեակը դաստիարակելը, իբրև լուսադոյն և ապահով միջոց դաստիարակութեան այս ամենակարևոր և մեծ նպատակին հասնելու : Մի շատ բարեկեցիկ մարդկանց տունը անպակաս է ընկերութենէ : Աստի հարք իրանց զաւակները նոր նոր այցելուների դիմաց պէտք է, որ վարժեցնեն և տաղանդաւոր և բարեկիրթ մարդիկների խոսակցութեան մէջ մտցնեն, երբ նրանք բաւական խելօք են հասկընալու : Իսկ գիւղարեւակ մարդիկ, ինչո՞ւ ի միասին չեն տանիլ զաւակներն երբ մեծարանաց այցելութեան գնան իրանց դրացիների, եւ չեմ դիտակ : Այն միայն լաւ գիտեմ որ զաւակին անապահ դաստիարակութիւն տուող մի հայր, աւելի առիթ ունի իր յատուկ ընկերութեան մէջ ընդունիլ երեխան և սպասաւորների և ստորին դուհիկին օրինակէն հեռու պահել նրան, քան թէ երբ դուրսը առնէր կրթութիւնը : Սակայն դարձեալ այս մասին մի որոշական դիտաւորութիւն կտրեմ ծնողաց պարագաների և վեճակի թողնում եմ անել, այսքանս զոհ լինելով կրկնել որ ամեն նաանարգ ամուսին լինել է մի հօր, երբ փոքր մի հոգ և փոյթ չի տանիլ զաւակին բարեկիրթութեան, թող ինքը որ և է վիճակի մէջ դանուի մի միայն ընտրելագոյն ժառանգութիւն է որ կարող է թողուլ իր զաւակին, ի վերայ այս ամենայնի եթէ ոմանք կարծիք անեն թէ խիստ մենաւոր է տնական կրթութիւնը մի կողմէ, և թէ հասարակ վարժարանաց մէջ եղա-

ծըն էլ միւս կողմէն պատանեկաց անվայելու չալոյն ժամանակ երկու կողմից երեւցած անպատեհութեանց դեմն առնելու միջոցներ կրնան գտնուիլ :

ՕՐԻՆԱԿԻ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ :

65 Քանի մեծ է մի ընկերութեան ազդեցութիւնը և մենք ամէնքս մանաւանդ երեսայքը , որքան պատրաստ և յօժար ենք ուրիշներն օրինակելու մասին քննելուց յետոյ, այս տեղս համարձակում եմ յիշեցնելու ծնողաց մի կարեւոր բան. այն է , ըվ որ փափագում է որ իրան որդին իրան յարգէ և իրա պատուէրը բռնէ պարտական է որ նա էլ մեծարանք անէ իրա տղին : *Maxima bebitur pueris reverentia.* Ինչ որ չես ուզում որ նա օրինակ առնի քեզինից , մի' անիլ նրա առջև : Եթէ դու անզգուշութեամբ մի բան նրա գործելիս սխալ ես համարում , հաւաստի եղիւր որ նա մի այնպիսի կերպով քու օրինակիդ ներքեւ կարող կլինի այնուհետեւ պահպանուիլ և պատասպարուիլ, որ հնարաւոր չի լինիլ քեզ ուրիշ անգամ նրա սխալանքը ուղղել, ճամբայ ցոյց տալ : Եթէ պատժում ես նրան այն բանին համար, որ դու էլ գործիլ ես , այն ժամանակ նա պիտի կարծիք անէ, որ քու խտուած իւնդ նրա բարիք անելու բարեսրտութենէ չի ծագիլ , այլ նոյն պատժէն իսկոյն նա հետեւանք պիտի հանէ որ ինքը մի դաժան յասկոտ և բռնասէր հօր չարասիրութեան բեռը կրում է և թէ նա իրան զլանում է անիրաւարար այն աղատութիւնը և ղուարճութիւնը, որ ինքը անպատիժ վայելում է : Իսկ եթէ զործ է ածում նոյն աղատութիւնը իրրեւ մի հասուն հասակի վայել բան , մի այնպիսի արտօնութիւն, որուն մի երեսայ չէ պարտաւոր բաղձալ , ահա նոյն ժամուն մեծազոյն զօրութիւն յաւելցնում ես օրինակիդ և նոյն արգելած գործդ կատարելու աւելի ազդու հրապոյր ընծայում ես երեսին : Վասն զի , քաջ միտ զիւր և յարաժամ յիշէ, որ երեխէք ժամանակից առաջ այրում մրկում են մարդի կարգ մտնելու , ուստի ոչ թէ ձևի կամ

վայելչութեան համար շուտ փոխան հագնիլ սիրում են , այլ միայն անով կաճում են թէ նշան կամ մի քայլ են առնում զէպի արքուն հասակ : Այս առաժս հարց վարմունքին միայն չի պատկանում , այլ նրանց որոնք փոքր ինչ յարակցութիւն . և իշխանութիւն ունին տղայոց վերայ * :

ՊԱՏԻԺ ՀԱԿԱՄԻՏՈՒԹԻՒՆ :

66 Հիմայ դառնանք՝ կրկին վարձատրութեանց և պատիժներու մասին : Ամէն տղայական խաղ , գործ , անշնորհ և անտաշ վարմունք և ամէն ինչ որ ժամանակն ու հասողութիւնը անշուշտ կարող են տալել և ուղղել դաւադանից զերծ ու ազատ անցկացնելուց յետոյ (ինչպէս որ արդէն ասացի) չի մնում այնուհետէ ծեծի հարկաւորութիւն , ինչպէս որ տեղ տեղ գործ են ածում : Իսկ երբ երեխայք ուշիմ դաստիարակի ներքեւ կարգալ , գրել , երգել , պարել , լեզու և այլն սկսանում են սովորիլ հարուածի կամ բռնահարութեան առիթ հազիւ հազ պատահում է : Մանկանց ճարտարութիւնը և ժրութիւնը արծարծելու և նրանց նոյն ուսմունքը հետզհետէ սորվեցնելու միակ միջոցն է , նախ ընտրած ուսումնիդ համեմ ու ճաշակը տալ նրանց : Կարի հիշտ է անել այս բանս եթէ ըստ պատշաճին վարել գիտենաս և վարձք ու պատուհաս դիպաւոր կերպով գործադրես և դասատուութեանց ժամանակ հետագայ մի քանի կանոնաց հետեւիս :

67 Ա. Ինչ որ որոշում ես ուսուցանել պէտք է որ նրանց վերայ իբրեւ մի ծանր կռան կամ անհրաժեշտ պաշտօն կռա-

* Այս զղուշութիւնը որ գլխաւորն է դաստիարակութեան մէջ , զլիսովին անտես են առնում մանաւանդ Պօլսաբնակ հայերը , ու եթէ չամաչեմ պիտի խոստովանեմ որ ստեպ ծնողք մոլութեան ուսուցիչք են իւրեանց դաւակաց , որոնց առջև ամէն վատ լիզու , անվայել վարմունք , անճոռնի խօսակցութիւն են բռնում և ողբալի է , որ թուրքական սպականակիր սովորութիւնները շատ հայ ընտանեաց մէջ մուտ է արել ունակութիւն է դարձել : Ի՞նչ անէ դպրոց , ի՞նչ օգտում է վարժապետ և դաստիարակ երբ մի բոպէի մէջ մի հայր իրան օրինակովը փարատում է բոլոր օրը դաւակին առած դասը խրատը և

նայ : Վասն զի իսկոյն տաղականում են եթէ բռնադատուին և այն դործը որ թերևս իրանց ախորժելի կամ անտարբեր երևում էր սկզբան՝ զգուեղի և անբերելի դառնայ : Իբրև փորձ , պատուիրիր մի տղի , որ ամէն օր որոշեալ ժամուն կամայ ակամայ իրան պտուտակը մտրակով պիտա տայ ու խաղայ , այս դործս նրանից իբրև պարտք պահանջէր և թէ իրիկուն այսքան ժամ պարապի և պիտի նայիս , որ այս կերպով թէ այս և այլ որ և իցէ խաղալիկից իսկոյն կձանձրանայ : Միթէ նոյնպէս չէ մեծահաս մարդկանց համար : Միթէ նրանք էլ զգուանք և ձանձրոյթ չեն գտնում երբ պահանջում են նրանցից մի բան իբրև պարտք , մինչդեռ այն բանն առանձինս յօժար կամօք կատարում են : Թէպէտ և դուք չափահաս մարդիկ մտիկ չէք անել , սակայն ճշմարիտ է որ աղայք անդամ հսկում ունին ցոյց տալու , ձեզիչափ , որ իրանք էլ աղատակամ ինքնիշխան , անկախ են և ինչ բարի բան որ կանեն ինքնօրէն են անում :

68. Բ. Այս տեղ ակն յայտնի երևում է , որ ուրեմն հարկ չէ ստեպ սախլել տղայոց որ իրանց սիրած բաներն անդամ կատարեն , երբ կտեսնես այս թէ և սէր և ախորժ ունին , սակայն միտում և հակամիտութիւն կը պակասին : Կան ժամեր որ կարգալ , գիր , երաժշտութիւն և այլն սիրողն անդամ նոյն բանից համ չի առնել ու եթէ նա նոյն պահուն ակամայ կամօք պարապի նրանց վրայ մի միայն նեղութիւն ու տանջանք է կրում առանց մի փոքր օգտի : Այսպէս է նաև երեսուցեանցի մասին : Հարկաւոր է ուրեմն ուշի ուշով քննել նրանց յօժարութեանց փոփոխութիւնը և դիտել թէ նրանց հակամիտութիւնն օգտակար կերպով դործածելու յա-

կանոնը , Տեսել եմ Պոլսոյ մէջ շատ հայրեր որ իրանց նորահաս զաւակաց առջև ամենաքստմեղինութիւնս վրայ խոսեցիս անպատկառ , իմ յանդիմանութեանս այս պատասխանս տուին . ինչ կայ , թող նրանք էլ ամէն բան սովորին , էշ չմեծանան , մարդ լինին , աչքերնին չորս բանն աշխարհումս : Ղաւ դիտէ , ընթերցող , որ աղտեղի բաները դիտութիւն համարում են այն անըղեղ գլուխները , և թէ նոյն միջոցին ներկայ էին հոն նաև ազգիկունք , Մեր հրապաշտ նախնիքը անդամայսպիսի ամբարոյականութեան նշաններ բնաւ չունին ցոյց տուած . . Ծ.Թ.

Չող ժամանակը ո՞րն է : Իսկ եթէ նրանք անհոգ են նստում
և բաւականին ժիր են , դեռ մի բանի ձեռն չզարկած՝ էլ աւելի
լաւ է դրդուել նրանց ակործանին ու յօժարութիւնը : Ես
կարծում եմ, որ այս բանս չէ դժուարին մի բանիբուն ու
իրան աշակերտին բնաւ որութիւնը արդէն քննած և հասկացած
դաստիարակի , երբ մի փոքր նեղութեամբ կարող կլինի
այնպիսի յարմար տեսիլներով Լքցնել նրա զլուխը , որ նա սկսի
սէր կապել իրան առաջարկուած գործին : Այսպիսի եւ
ղանակաւ թէ նեղութիւնն է վերանում և թէ ժա-
մանակ է վատտակում . ըստ որում մի պատանեակ որ-
չափ որ եռադատիկ աւելի և շուտ ուսանում լինի ի-
րան դասը , երբ նրա յօժարութիւնը արթուն և ընդու-
նակ է , էլի կրկնապատիկ նեղութիւնն է կրում , երբ նա
անյօժար է կամ իրան իր գործին բռնի քաշքշում
են : Եթէ այս դիտողութիւնս ի գործ դնուի և հրամայուի
տղայոց որ տաղտկանալու չափ զբօսնուն , էլի հաւաստի եմ
որ ամէն մի տղայ իրան հասակին տարածին չափ բան սո-
վորելու ժամանակ կունենայ : Սակայն հիմա ո՞վ բանի տեղ է
դնում մի այսպիսի նկատում հասարակ դաստիարակու-
թեան մէջ և ո՞վ կարող է սրանից օգուտ քաղել , քանի որ
կոշտ դաւադանին իշխանութիւնը տարբեր սկզբանց վերայ
հիմնուած է , նրա համը հօտը չունի բնաւին և տղայոց վա-
ղանցիկ բնաւորութիւնը չի նկատում , այլ անխտիր օրորում
է և տատանում առանց մտիկ անելու ոչ յօժարութեան և
ոչ հակամիտութեան պայմաններու : Եւ ճշմարիտը ծաղրելի
կլինէր յուսալ , որ տղայքը ազատօրէն և ինքնակամ իրանց
խաղը մի դէն թողուն և սիրով իրանց դասերին վազին , երբ
մի անգամ ձեռն և դան ըմպելուց յետոյ , նոյն դասերից յի-
շատակէն էլ զղուել են և զարհուրել : Իսկ սրաներհակ եթէ
ամէն բան ըստ կարգի և կանոնի տրամադրուի , ուսումն ան-
գամ իբրեւ խաղ ու զբօսանք հանդիստ և դադար կթուէր երեւ-
խանց , ինչպէս որ խաղն է դարձել՝ ուսմանց նկատմամբ : Եւ
երկու կողմից էլ հաւասար է նեղութիւնը : Վասն զի չէ
թէ երկխաղք աշխատանքից փախչում են , նա մանաւանդ
սիրում են միշտ ի բնէ կուլ , գործել և փոփոխութիւն ու

այլայլութիւն կարի ախորժումն , այլ խաղի մի գլխաւոր հրապոյրն այն է. որ տղայք արձակ համարձակ գործում և իրանց ճիգն ու աշխատութիւնը, որնոր եթէ լաւ դիտել ես բնաւ չեն խնայում ազատութեամբ թափելու: Սակայն նրանց փոխելով՝ հրամայելով, բռնահարելով, չարչարելով են սորվեցնում ուսմունքը: Ահա այս բռնութեան առջեւ նորեկ աշակերտներն աղուշ և սառ են կտրվում և իրանց ազատութեան պապակում: Մի անգամ սովիցիւրու նրանց որ իրանք իրանց խնդրեն դատաւել որ դատ տայ, ինչպէս որ ստեպ իրանց վարժակիցներից խնդրում են, փոխանակ ուսուցիչը նրանցմէ պահանջելու և այն ժամանակ ուրախ զուարթ կաշիստին և կյառաջանան տեսանելով, որ ինչպէս միւս բանից, նոյնպէս դատի մասին ազատօրէն գործում են և խօսոյն նոյն գործը իբրեւ իրանց խաղի ու զօսանքի մինը կհամարեն: Եթէ ուշադրութեամբ այս ընթացքը բռնուի փոքր առ փոքր տղայն կսկսի ինքնիրան փափաղիլ սորվելու ամէն ինչ որ սահմանում ես հետզհետէ նրա ուսմանց համար: Խոստանում եմ որ սկիզբն է ամենադժուարին, սակայն երբ մի անգամ տղայն կանոնի դառնայ, շատ զիւրիմ կլինի առաջնորդել նրան ո՛ր որ կամենաս:

69 Թէպէտ և իրաւ է այս, որ տղայոց բան սորվեցնելու համար այնպէս ժամանակ ընտրել պէտք է, որ նրանք յօժարամիտ և պատրաստակամ լինին, և նրանց ուշքն ու միտքը դանդաղութենէ բթացած և պաշարած կամ ուրիշ բանով զբաղած չլինին, սակայն դարձեալ երկու բան կայ հոգ տանելու: Նախ պէտք է լաւ դիտել որ, ուսմանց ընտրելի ժամերը քանի պատահին անտես, անփոյթ և անգործ անցնելով և կամ նոյն ժամերը ըստ հարկին չի գալով՝ տղն զարգացումը երեսի վրայ չմնայ և նրա սովորական ծուլութիւնը և հեղգութիւնը ախտ չի դառնայ: Երկրորդ՝ Թէպէտ և մարդս սիրտ և յօժարութիւն, չունեցած ժամանակ կամ թէ ուրիշ բանի պարապած ժամուն, ուրիշ ինչ որ սովորի հարեանցի է սովորում, սակայն մի կարեւոր և մեր ուշադրութեան արժանի բան է, այնպէս կրթել միտքն, որ ինքն իրան իշխէ և ընտրութեամբ կաբողանայ դար-

Ճընել այն , հեշտիւ և սիրով մի տաք տաք խուզարկութենէ
այլ առարկայի վերայ , կամ որ և իցէ ժամանակ զօրանամ
ու թօթափէ վիզէն մեղկութեան լուծը և ինչ բան , կամ
խորհուրդ որ պատուիրում են կորովաբար ի գործ ածէ :
Այս ուղղութեամբս գնալ արժան է տղայոց և փորձ փորձել
առաջադիր բանին դրդել նրանց յօժարութիւնը , երբ նրանք
անփոյթ են անհոգութեամբ կամ ուրիշ մի բանով զբաղուած են
սեպհական ընդունակութեամբ : Եթէ այսպէս վարժի միտքը
տիրել իրան վրայ , ու ամէն առթով նոր նոր զաղափարներու
խօնարհիլ և առանց դժկամակութեան կամ վշտի այլ և այլ
անախորժ գործոց զբաղիլ , այս արդիւնքը աւելի օգտակար
հեռուութիւններ կարող է ունենալ քան լատին լեզուին կամ
տրամաբանութեան ուսումը և կամ ինչ , որ առ հասարակ
բռնապէս ոտրվեցնում են տղայոց :

ԲՈՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ.

70 Երեսայք իրանց երեսայութեան ժամանակ էլ ա-
ւելի վարունգործօն և ժիր լինելով , քան իրանց կենաց ու-
րիշ ժամանակը , իրանց կտրածին ու թափածին համար հոգ
չեն անել , բաւական է որ միշտ բան անեն , բուն պարն ու
Մովսիսական կաքաւը մի և նոյն բան պիտի համարէին եթէ
մրցանակն ու պատիժը հաւասար լինէին : Սակայն ես դի-
տում եմ , որ մի միայն պատճառ տղայոց վհատութեան իրանց
ուսանելիք ուսմանց մասին այս է , որ իբրև անհրաժեշտ-գործ
և պարտք են պատուիրում , և նեղում սաստում և բռնադատում
են նրանց , որ սովորին , և նրանք էլ կատարում են ահով
ու զողով . և կամ երբ յօժարութեամբ և ինքնակամ զառ-
նան և պարապին իրանց դասերուն , այնքան երկար ժամա-
նակ պահում են նրանց իրանց գործին , որ լիովին տաղտուկ
զգում և աչքից հանում են , թէ դաս , թէ ուսում . իսկ
լաւ զիտում ես , որ այս երկու գրութեամբ էլ նրանց սիրած
բնական աղատութիւնը սեղմում ես ու կորցնում . բայց նոյն
աղատութիւնն է ահաւասիկ , որ նրանց խաղերուն համ հոտ

է տալիս : Բարձրու, փոփոխիր այն անհեթեթ կերպդ և իսկոյն պիտի տեսնես , որ նրանց ժրութիւնը որ կողմն աւելի պիտի հակի ու բանի , մանաւանդ երբ իրանց յարգած մարդոց դերագոյն օրինակը դառնում են իրանց առջև : Իսկ եթէ իրանց այլոց վրայ անսած բարի օրանակներն այնպէս իմն տըպաւորենք նրանց մտքի մէջ, իբր թէ բարձրագոյն հասակի և դասի արտօնութիւններ և իրանց կարողութենէ վեր բաներ են, այն ժամանակ նրանց փառասիրութեան ոգին և աւելի յառաջագէմ և բարձր ու բարձր ելնելով վերի դասին հասնելու փափազը նրանց աշխատանքը կբազմապատկէ արիութեամբ և զուարճութեամբ յառաջադիմութեան մէջ : Զուարճութիւն կատեմ այն բանին, որ իրանք իրանց ազատ կամքով կսկսին իրանց ուսմունքը և այս ամենասիրելի ազատութիւնը շատ մեծ ու մեծ քաջալերութիւն կլինի նրանց համար : Եթէ այս բաներու վրայ աւելցնենք նաեւ յարգ և բարի անուն ստանալու զրգիւն էլ, այն ժամանակ ես ապահով եմ, որ ազայոց աշխատութիւնը և ժրութիւնը բոլորեքելու համար այլ ինչ մտրակ հարկաւոր չէ : Խոստովանում եմ նաեւ, որ նախ և առաջ դաստիարակը մի շատ համբերութիւն, ճարպիկութիւն , անուշութիւն, ուշադրութիւն և խոհեմ ընթացք բանեցնել պէտք է այս նպատակիս հասանելու համար :

Սակայն եթէ հոգս և նեղութիւն չի պահանջել դաստիարակութիւնը , դաստիարակի ի՞նչ հարկ կլինէր : Արդ եթէ մի անգամ ընդունելի ես գտանում այս խորհուրդս ամէն ի՞նչ կատարէ առնում աւելի հեշտ կերպով, քան թէ անաշուռ ու հրամայական մանկավարժութեամբ. ես կարծում եմ որ այս գլխաւոր կէտս շահելու համար չկայ ամենեւին դժուարութիւն , նա մանաւանդ երբ ազայոց առջև վատ օրինակներ չի գտնուին : Ողևտի իմ միակ ահն ու դողը սպասաւորաց և ուրիշ թերկիրթ կամ մալի և յիմար մարդոց վտանգաւոր ընկերութենէ է , որոնք աղականում և մոլորում են երեսայքը երկու կերպով, նախ իրանց վատ բարուց վատ օրինակով, երկրորդ երկու տարաձայն բան տալով նրանց, այն է , մոլեկան զուարճութեանց ճաշակ և զովասանութիւն :

ՍԱՍՏ :

71 Արդէն ասացինք որ երեխէք ծեծով մարդ չեն լինի , նոյնպէս կարծում եմ որ նրանց շատ անգամ ու բարկութեամբ աստեղն լաւ պտուղ չի բերել : Այս կերպով ծնողաց իշխանութիւնը և աղին պատկառանքը նուազում են : Եւ կրկին պատուէր եմ տալի քեզ յիշել որ երեխաները շատ շուտ զգում են թէ ո՞ր բանը կիրքով հրամայում ես և ո՞րը իմաստութեամբ խրատում . և ինչպէս միշտ պատկառում են վերջինին խրատին առջև , նոյնպէս քամահրում են առաջինին սպառնալիքը : Իսկ եթէ քու որոտալի աստեղ մի ժամ նրանց ահն ու դողը կըբռնէ , իսկոյն մարում է և դադարում և նրանց բնական խելքն սորվեցնում է բանի տեղ չդնել , մի այնպիսի խրտուիլակ որ դու ու գոչում է թողնում առանց հագի և բան ցոյց տալու : Երբոր երեխէք վատ բաներ կ'անեն որ սակաւ են մանկութեան ժանանակ . բաւական է որ հայրերը մի նշան , մի ականարկ անելով նրանք կարգի բերեն , իսկ եթէ խօսք խօսիլ հարկ լինի , պարտաւոր են ծանր , զգաստ և անուշ կերպով նրանց արածին չար հետեանքը բաց ու ականբերե անել , քան թէ շտապաւ և սրտմտութեամբ նրանց զլինին կրակ ու բոց տեղալ , որ թէ և երեխայքը կարող չեն լինել հտականալու թէ արդեօք քու բարկութեանդ հուրը իրանց անձին դէմ վառում է թէ ոչ սխալանաց , հասարակօրէն բարկութեամբ սաստողին լեզուն կողիտ և ստոր է լինում , որուն մի ուրիշ վատ հետեութիւնն է նոյնը տղայոց էլ սորվեցնել և ինքնովին արդարայնել . իսկ այն ցասման ժամանակ ծնողաց և մանկավարժներու արտասանած անպիտան ածականները երեխայք էլ յետ չեն մնալ և չեն ամաչել ուրիշներու տալ , քանի որ այնպիսի ծանրակշիռ մարդկան բերնէն են լսել :

ՅԱՄԱՌՈՒԹԻՒՆ .

74 Այստեղս գուշակում եմ որ ինձ դէմ մի առարկու-

Թիւն պիտի անեն ասելով՝ լաւ ուրեմն, ուղում ես որ երեւի էք ինչ որ անեն չծեծենք և չի յանդիմանենք, ապա ինչպէս զսպենք: Միթէ այդ կերպով նրանց ամէն տեսակ անկարգութեանց սանձ արձակ արձակել չէ: Ա՛յ ամենեւին, չէ, եթէ վերի պատուէրիս համեմատ ուղիղ շաւիղ բռնել, նրանց միտքը կանուխ մշակել և նրանց առ ծնողս ակնածութիւնը տապաւորել ես նրանց արտումը: Վասն զի անընդհատ դիտողութեամբ համոզուել եմ արդէն, որ ոչ ինչ օղուտ և շահ չի անում ծեծը. մի այնպիսի պատիժ, որուն տալիք կծու ցաւըն է միայն ահաբեկի և զգալի երեխանց, իսկ նրա ազդեցութիւնը շուտով անց է կենում յիշատակին հետ:

Սակայն դարձեալ կայ պակասութիւն որուն համար ինձ թուում է թէ ծեծել պէտք է տղայքը, այն է յամառութիւն կամ ստամբակութիւն. բայց այս մասին եթէ հնար է, հարկ է ի դորձ ածել գաւազանը այնպէս, որ աւելի նրանից ծագած ամօթը քան թէ ցաւը անէ ներգործութիւնը: Վասն զի առաքինութեան պատկանելի մի ճշմարիտ սանձ է չար դործելուց ամաչել և հետևապէս պատժի արժանի սեպուիլ դործելիս: Իսկ գաւազանին ցաւը իսկոյն անց է կենում, մոռացվում, և յաճախ դործադրութեամբ նրա պատճառած արհաւիրքը շուտով անյայտ լինում եթէ նրա հետ ամօթխածութիւնը չի երևիլ: Տեսել եմ մի պատուարժան մարդու որդիքը, որ այնքան էին սարսափում մի միայն իրանց մուճակները քաշել հանել տալու վախից, որքան որ ուրիշ տղայք իրանց գլխին վերևը կախուած մի գաւազան տեսնելիս: Այսպէս լաւագոյն է որ և իցէ պատուհասի հարևանցի շուքը ցոյց տալ նրանց քան թէ իրօք ի դորձ դնել: Վասն զի եթէ ուղում ես որ որդիքդ ճշարտապէս ուշիմ և արթուն լինին, մտիկ դիր որ նրանք չէ թէ ցաւ և կըսկիծ կրելուց վախենան, այլ յանցանաց տակից ծագելիք ամօթից և երեսաց ընկնելուց խորշին: Սակայն կամակորուծեան և յամառեալ անհնազանդութեան այլ ճար ճարակ չկան բայց եթէ զօրութիւն և գան: Ամէն ինչ որ պատանեկին պատուիրում ես կամ արդիւում, անվերջ պէտք է որ նա հնազանդ լինի քեզ, չիք ներում, ոչ ապաւէն, ոչ

գիմադրութիւն : Վասն զի նոյն պահուն որ դու հրաման
ես տալի և նա մերժում , ճարպիկութեան և իրարից գլուխ
եղնելու կռիւ է անցկենում ձեր միջումը ու եթէ քու կողմ
մից մի հրաման , մի սաստ և խօսք օգուտ չեն անիլ զարկ
ու գան տօնը նրան , մինչև որ գլուխ ծռէ . ապա թէ ոչ յե-
տոյ դու քու որդեոյդ հնազանդ ստրուկը կդառնաս : Այս-
պէս մէկ առթով իմ ծանօթներից մի խոհեմ և բարեսիրտ մայր
հարկադրեցաւ մի առաւօտ ութ անգամ հետզհետէ զանել
իր աղջիկը , որ այն ինչ տուն էր եկել իր դայեկին մօտէն ,
մինչև որ նրա յամառութիւնը կարեց և իր հրամայած մի
կարի հեշտ և աննշան բանը կատարել տուաւ : Եթէ եօթն
անգամ գան տալուց ետև մայրը կանգ առնէր և նրա օձիքը
թողնէր , իրա վաւակը ոչ միայն բոլորովին խանդարած կըմը-
նար այլ և իրան ապարդիւն գանահարութեամբը աւելի
հաստատած կլինէր իր աղջկան հետտութիւնը . որուն բժշ-
կութիւնը հազիւ հազ կարելի կլինէր վերջնումը , սակայն նա
ծեծը շարունակեց՝ մինչև որ աղջկան միտքը ծռեց և կամ-
քը կտորեց , և այս է մի պատժի հական նպատակը , իսկոյն
և առաջին առթիւ իր մայրական իշխանութիւնը ճանջցուց
և հաստատեց . որով իրան աղջիկը այնուհետև միշտ պատ-
րաստ , հլու և յօժար էր գտանում իրան որ և իցէ հրա-
մանը կատարելու : Վասն զի , ինչպէս որ առաջին անգամն
էր որ ծեծեց իրան աղջիկը , այնպէս կարծում եմ , որ նա և
վերջինն եղաւ :

Երբ մի անգամ ստիպվում ես գաւազան առնել ի ձե-
ռին , պէտք է որ նա իր գործը տեսնէ մինչև որ խօսքդ կա-
տարել տայ և նախ երեսային կամակոր միտքը թեքելով իշ-
խանութիւնդ հաստատէ . յետոյ նոյն իշխանութիւնդ կա-
րող լինիս պահել շարունակ երբեմն ծանրութիւն և երբեմն
անուշութիւն ցոյց տալով :


Այս զխտողութիւնս լաւ զխտողին , ակներև երևում է
անշուշտ որ գաւազան և մտրակ գործածելիս մեծ զգուշու-
շութիւն պէտք է անել , որ ամէն պարագայումը իբրև մի
ապահով ընդհանուր զեղ չի վարէ . նա մանաւանդ այս ստոյգ
է որ եթէ նրանով սպասուած օգուտը չենք ստանալ , ոչ

միայն մեծագոյն չարիք է հետեւում կամակորին միտքն ու կամքը անդեկ և անտաշ թողելով աշխարհ և նրա միսն ու սիրտը պնդացնում և ինքն իր սիրական հետութեանն էլ աւելի յարում է և կըպչում : Վասն զի մի անգամ որ նա յաղթանակը տարաւ պատարաստ է կենում պատերազմի և իրան խօսքն ու կամքը քշելու յուսալ ապագայումը : Այսպէս աներկբայ եւ՛ ես, որ անպատեհ ու անճաշ պատուհաս կրելով մի շատ երեսայր կամակոր և հետտ են դառնում, մինչդեռ առանց նրա կարի հըլու և համբոյր կարող է ին լինել : Վասն զի երբ պատժում ես մանուկը այնպէս որ անց կացած ու բարկութիւնդ շարժած յանցանքին վրէժը առնել կամենայիր, ի՞նչ տեսակ օգուտ կարող է քաղել նրանով նրա միտքը որ է մի միայն ուղղելի մասը : Եթէ ակամայից և առանց ստամբակութեան ոգով գործել էր տղայն այն սխալանքը, մի՞թէ հարկ էր նրա ծեծ և դան տալ : Տկարամտութենէ, մոռացկոտութենէ կամ անզգուշութենէ յառաջ եկած մանր մունր սխալներու և յանցանքներու համար բաւական և պէտք եղած ինչ քիչ դեղ է անուշ կամ ծանր յանդիմանութիւնը : Սակայն երբոր չարակամութիւն և նախորոշ խորհուրդ դտանում ես տղայոց ստահակութեան մէջ, պատուհասը նրա արած թիւր գործին մեծութեան կամ փոքրիկութեան վերայ մի՛ չափիր. այլ հօրը հրամանին և ակնածութեան դէմ արած որ և իցէ ընդդիմութեան աստիճանը նկատելով վարէ դաւաղանդ և երբեմն աստիկացրու, երբեմն մեղմիր հարուածներդ, մինչև որ նրա խելքը զլուխը գայ զըմամբ, տրամութեան և ամօթահարութեան նշանները ցոյց տալով հնազանդութեան դառնայ :

Պիտի շարունակուի


Թարգմանութիւն

Մատթէոսի Մամուրեան



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՎԻՃԱԿԸ

ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐԻՐՈՐԴ ԴԱՐՈՒՄԸ.



Քրիստոնէութիւնը.—Նորա արտաքին ձևերը. —
Շիտիները.—միութեան պատճառները. —**Շնորհալին,**
Լամբրոնացին. —**Նրանց արժանաւորութիւնը.** —
Տուտէողին կամ արևելեան վարդապետները:

Ինչքան , որ քրիստոնէութեան բուն ոգին մաղկային ազդի մէջ խաղաղութիւն տարածող սկզբունքներից առաջինն է եղած և պառակտեալ մարդկութեան միաբանելու պատճառ , այնքան էլ դարեւոր ժամանակներով մեծամեծ խռովութիւնների , արիւնահեղ կռիւների և շիտիների առարկայ դառած է : Այս ծագել է այն պատճառներից , որ մարդկութիւնը դեռ սկզբնական ժամանակումը իր ողջամիտ հայեցողածքը չէր ձգել քրիստոնէութեան վրայ և չէր ճանաչել այս երկնային կրօնի նպատակը :

Քրիստոնէութիւնը , դեռ մարդկութեան սրտերի մէջ չհաստատուած , շատ անձերի անձնական շահին դործիք է դառել : Այս կրօնը , որ միայն ՀՈԴԻ է և ՍԻՐՏ. ստացել է այս ժամանակ մարդկութիւնից արտաքին ձևեր , որպէս զի շատերի աչքերը յափշտակէ : Եւ յիրաւի ինչ նպատակի

Համար մարդ այս արտաքին ձևերը հնարեց , և Քրիստոնէութեան արտաքին կերպարանք տուեց , ունեցաւ մի մեծ արդիւնք , որովհետեւ շատ ազգեր այս արտաքին ձևերից հրապուրուելով ընդունեցին Քրիստոնէութիւնը : Միջին դարու այն ազգերը , որոնք յափշտակուելով Արևմտեան կամ Լատինական եկեղեցւոյ արտաքին ձևերից , կամ իւրեանց օգտի համար ընդունեցին քրիստոնէութիւնը , նրանց մէջ շատ ուշ այս կրօնը իր բարերար ազդեցութիւնը տարածելով մի նշանակութիւն ստացաւ : Նրանց քրիստոնէութիւնը կայանում է միայն արտաքին ձևի—դաւանութիւնների , ծեսերի , սովորութիւնների մէջ , որոնք առաւել յարգ ու պատիւ են դառնում , քան թէ այս կրօնի բուն ոգին և նպատակը : այս նպատակը և ոգին միշտ զոհուած է երկրորդական բաների համար , որոնք փրկութեան ամեննին ձեռնտու չեն—Սէրը , խաղաղութիւնը և սրանց խոստացած յառաջագիմութիւնը միշտ զոհուած է խռովութիւնների , շփոթների և աղմուկների համար , որոնք յառաջացած են զանազան ազգերի մէջ եղած աւանդութիւնների անհամաձայնութեամբ :

Քրիստոնէութիւնը մի երկնային կրօն է , և ընդհանուրի բաժին . Նա իր արժանաւորութիւնը ցոյց է տալիս այն տեղ , որ ռամկին և աղքատականին , աղքատին և հարուստին մի և նոյն խօստումն է անում , և ամենքի վրայ մի հայեցումով դարձնում . քրիստոնէութիւնը այն տեղ է իր նշանակութիւնը կորցրել , երբ մի անհատի անձնական շահի գործիք է դառել : Աւետարանի բառերի քննութիւնը բացուելով հակառակաբար փրկեստութեան համար նիւթ է մատակարարել :

Պատմութեան մէջ շատ կտեսնենք այսպիսի հանդէսներ , երբ նորա վերայ պատմական աչքով նայենք : Այս առաձիգ գեղեցիկ օրինակ կարող ենք ընդունել պատմութեան մէջ Արևմտեան եկեղեցին , որ հիմնարկութենից մինչև կործանումը Աւետարանի բառերը քննող անձերի ասպարէզ է դառնում : Նորա վիճաբանութեան առարկայքը այն բաներն են եղած , որոնք ոչ մեր փրկութեան ձեռնառու են և ոչ քրիստոնէութեան յարգը շատացնող , այլ ինչպէս Քրիստոնէութեան նմանապէս մարկղութեան յարգը նոսրացը-

նելով յառաջագիմութեան արգելք եղած են : Այս երկար միջոցումը Արևմուտքը կամենում է ձեռք մխել այն բանին առանց Քրիստոնէութեան , որ միայն այս կրօնի արգիւնքն է : Սա դարեւոր ժամանակներով Հայաստանի հետ վէճ է ունեցած , որ թէպէտ կրօնական առարկաներու համար էր , սակայն ինքն ըստ ինքեան վարագործում էր մի քաղաքական նպատակ : Այս ինչպէս երկպառակութիւն է յառաջուցրել , այնպէս էլ ռիւք , ատելութիւնը , և վրէժխնդրութիւնը իր հետ ծնելով Հայաստանի ժողովուրդի մեծամեծ թշուառութիւնները և անբաղդութիւնները պատճառել : Բայց այս վէճը Յոյնը միայն Հայուն հետ չէ բաց արել , այլ նոյն իսկ իր արիւնակից եղբայրների հետ , որոնք մի և նոյն ազգի մէջ հազարաւոր հապառակ մասեր են ծնել . բայց որովհետև մեր խօսքը մեզ հետ ունեցածի վրայ է , վասնորոյ մեր ուշադրութիւնը սորա վերայ դարձնենք :

Հայոց ազգը թէպէտ իր լուսաւորութենից անմիջապէս յետոյ չէ , սակայն մի քանի ժամանակից յետոյ վերնախնամ ճեւղութեան պարգեւած հովիւներով և անձնայիր առաջնորդներով վերին աստիճան յառաջագիմութիւն ստացած է քրիստոնէութեան մէջ : Այս կրօնը ինչքան Հայի քաղաքական և նիւթական կեանքին , ուրեմն և մտաւոր յառաջագիմութեան մի հարուած է տուել , այնքան էլ նորա բարոյական կեանքը ազնուանալուն նպաստել է : Սրանց վիաները կարող են լինել հաւատի համար կրած նահատակութիւնները , Ալեմուքի եկեղեցւոյ նորանոր ուսումներից հետեւ կենալը , և այս զգուշութիւնը ապահովացնելու համար խալառ միութեան կապը կտրելը այդ եկեղեցուց : Ինչքան որ Հայը անտարբեր է նայել նորամուտ աւանդութիւնների և արարողութիւնների վրայ , այնքան էլ զայրացել է այլ ազգաց ինքնասիրութիւնը մի անվերջ ատելութեամբ : Հայաստանի քրիստոնէական կեանքի միջումը շարունակ երևել են այնպէս անողորմ բռնաւորներ և բարբառոսներ , որոնց բաւականութիւնը միայն կայանում էր տւերելու քանդելու և սպանելու մէջ . բայց Հայաստանը միշտ

տառն աչքով նայելով այս յարբարոսների վարքի վրայ, մասնաւոր տեսնելով որ նոքա մի այնպիսի կրօնի սպասաւոր են որ քրիստոնէութեան ոսոխն է, ամենայն քայլումը ընդդէմութիւն է ցոյց տուել և ոչ մի ժամանակ այն մեծ դարերի մէջ չէ անհետացել: Յունական կայսերութիւնը ընդհակառակը, թէպէտ Հայի դէմ զէնք չէ բարձրացրել, սակայն աւելի է ֆեւսել. քանի որ իր թշնամութիւնը դարաներով և խորամանկութիւններով էր յայտնում և ոչ թէ դէմառ դէմ պատերազմելով: Ո՛չ Սասանեաններն ոչ Իսլամները և ոչ Սելջուկները այնպէս ֆեւսելն Հայաստանի բարոյական կեանքին, ինչքան Յունաց կայսերները: Այնթ թշնամիները Հայաստանի քաղաքները անշքացրին, սակայն եկեղեցին պայծառացրին. Հայի նիւթական կեանքը նուազեցին բայց հոյեկան կեանքին առատութիւն և յառաջադիմութիւն ընծայեցին. իսկ Յոսները թէ քաղաքները և թէ եկեղեցիները անշքացրին. հայի թէ քաղաքական թէ ընկերական, և թէ բարոյական կեանքը հարուածեցին:

Եւթն դար ժամանակ մեր պատմութեան ամենայն մի թերթը թշուառութեան և անբաղդութեան հայելի են, որոնք քարոզում են Յունաստանի մի քանի անդամների խորամանկութիւնը և առ Հայն ունեցած ատելութիւնը: Եկեղեցական պատմութիւնը մեզ կուսուցանէ, որ այս եւթն դար ժամանակը վէճերի և երկպառակութիւնների հանդէս են եղած Արեւմուտքի և Հայկական եկեղեցիները: Հայը զգուշանում է իր նախնեաց նուիրական աւանդութիւնները յունական նորամուտ վարդապետութիւններին մատնելուց, իսկ Արեւմուտքը բռնանում է իր նպատակին հասնելու համար: Սա այս ժամանակ քաշում է Հայից ինչպէս հերիախիոսից: Բայց մենք լաւ գիտենք, որ Հայաստանեայց եկեղեցին չունէր և չունի ոչ մի արատ հերիախիոսութեան, որով ի վուր զրոգատում էին: Հայի և նորա աւանդութիւնների մէջ գտնուում է մի զանազանութիւն, որով բաժանուում է Հայը Արեւմուտքի եկեղեցուց: Հայը այս արգարացի ընդդիմութիւնը անում էր, ոչ իր կամակոր կամքը յառաջ տանելու համար, այլ հարազատ կենալու եկեղեցւոյ Սուրբ Հայրերին, քրիստոնէութեան աղբիւրի վրայ հիմնուելով: Արեւմուտքի եկեղեցւոյ ցանկութեամբ

Թիւնը միայն հայի աւանդութիւնները իրան հետ միացնելն էր , սակայն այս ցանկում թիւնը մեծ արդելք է տեսել Հայաստանի փոքր հօտից, բայց այս արդելքը ինքնասիրութիւնը չէ վհատեցրել : Նա խորամանկութիւններ դարաններ լարելու ունայնութիւն էլ տեսնելով աւելի է զայրացել է գէշք առնուլ , ատելութիւնը բորբոքել , վճժխնդիր լինել , և այնպէս Հայի տունը տախնուլրայ անել :

Բայց այս յիմար և անխրատ վէճերի ժամանակ ո՞վ իրա
ստիսի խօսքը լսում էր. ո՞վ քրիստոնէութեան վրայ մտածում
էր. և խաղաղութեան ու սիրոյ համար իր ողջատոհմ միտք
նուիրում : Ո՞ւմ մտքիցն էր անցնում թէ « Զմիջնորդ խա-
ղաղութեան գրգռատոս՝ հիմն ատելութեան և հակառա-
գիութեան առաք » : Ո՞ր հակառակասէր կողմնակցութիւնը
չէ՞ր մտածում արգեօք՝ իր յամառութեան զոհել ևս ան-
մեղ արիւններ. և այս վէճերի մէջ խառնուող ո՞ր անձը կա-
տարեալ քրիստոնէութեան ոգի կ'ունենար : Այս սնտախ և ու-
նայն վէճերը հասնում են մինչև տասներկուերորդ դարը,
որ մեր եկեղեցւոյ նշանաւոր կէտերից մինն է : Այս այն դարն
է, որ ժամանակ թէպէտ բանիւ վերջացան եօթնդարեան
վէճերը, կեղեքող երկպառակութիւնները և անձնապիւր հո-
հիւների և հմուտ առաջնորդների շտրհիւ միութեան համ-
բաւներ տորածեցան, սակայն սոքա ամէնքը անարդիւնք և
անպտուղ կորան : Հայը այս դարումս մի քանի օրուայ մի-

ութեան համար պատրաստուելու՝ բոլորովին մեկնուելու և անջատուելու Սրբմուտքի եկեղեցուց , բարձի թող առնելով երկար վիճաբանութիւնները . և յիրաւի տեսնում ենք , որ այս միութեան համար վաստակողների մահուանից յետոյ , և ոչ մինը չի դարձնում իր ուշադրութիւնը սիրոյ և միութեան վրայ : Քաղաքական հանգամանքները մեծ արգելք են դնում այս միութեան . Յունական կայսերութիւնը աւերող թշնամին զարթնում է , իսկ Հայը իր թագը և թագաւորը իսպառ լքանելու պատրաստուում :

Տասներկուերորդ դարումս թէպէտ վերջ են ստանում օտարի վիճաբանութիւնները , և Յոյնը վաստակում է վրէժ խնդրութիւնից , սակայն մի ուրիշ ոտիս կամենում է իր բռնութիւնը տարածել Հայաստանի եկեղեցւոյ վրայ : Այս ոտիսը լատինական եկեղեցւոյ գլուխն էր , որ այն ժամանակ ինչպէս հոգեւոր նմանապէս և մարմնաւոր իշխան էր Արեւմուտքումը և իր ներգործութիւնը տարածած էր համարեալ ողջ Եւրոպայի վրայ : Ռուբինեանց անկախ իշխանութիւնը հաղորդակցութիւն անելով Եւրոպայի խաչակիրների հետ , իր մեծամեծ վնասները պատճառեց : Պապը , որ Եւրոպայի իշխաններին հրամայողն ու խաչակիրների շարժողն էր , յարմար առիթ համարելով այս միջոցը , սկսեց մտած մօճնքներ անել և փորձեր փորձել իր բռնութեանը տակ ընկճել Հայաստանի եկեղեցւոյ ազատութիւն . և Արեւելքը իր հպատակ Արեւմուտքի հետ միացնել : Եւ յիրաւի պատական բռնութիւնը Արեւելք անցանելու դուռը Կիլիկիան եղաւ : Հայերը , որ ազատ քրիստոնէութեան սպասաւոր և ջատագով էին , սկզբումը ոչինչ չհամարեցին և շնկատեցին պապական իշխանութիւնից օգնութիւն կանչելու վնասները : Այս մի յարմար առիթ էր պապերին Հայոց եկեղեցւոյ գործերի մէջ խառնուիլ իբրեւ քրիստոնեայ : Հայերը , ոչ միայն իւրեանց կոչած օգնութիւնից գուրկ մնացին , այլ և մեծամեծ վնասներ տեսան : Արդէն աննշան կերպով առկայծում էր այն հուրը , որ Ունիթոսների ժամանակ անգթութիւնների և աւերների հետ ընկերանալով բոլորովին Հայաստանը ամայացրեց : Համարձակ կարող ենք ասել , որ պա-

պական եկեղեցին առաւել քանսեղ Հայոստանի եկեղեցւոյ ազատութեան քան թէ Յունական եկեղեցին : Յունական եկեղեցւոյ քարոզիչները ամենեւին չենք տեսնում Հայաստանում տարածուած . իսկ ընդ հակառակը պապական եկեղեցւոյ միարարները ողջ Հայաստանի մէջ սփռուած , քարոզում են մի քրիստոնէութիւն : Ահա այս միարարների շնորհիւն է , որ յօրինուած են այն մի քանի երգերը և շարականները , որոնք այսօր Հայը անուշադիր երգում է և իր նախնեաց աւանդութիւններն է համարում : Հայաստանի եկեղեցւոյ այն բաները , որոնց մէջ փայլում է պապական բռնաւորութիւն , և գահադլիւթութիւն , և այլն , միայն այս ժամանակի արդիւնքն ու արգասիքն են : Արտաքին Աստուածապաշտութեան ձևերը , որ այսօր զանազան կլիմայի տակի գտնուած Հայի համար զանազան է , մնացել են այս բռնաւորական իշխանութիւնը տարածուելու հնարքները մտածելու օրից : Բայց երկինքը իր օգնութիւնը Հայի մի նեցուկ տուեց , կարծես , իր եկեղեցւոյ անկախ ազատութիւնը պաշտպանելու և ընդդիմանալու փառասիրութեան կրքերին :

Տասներկու երրորդ դարը մի նշանաւոր շրջան է Հայոց կեանքի համար , որ մտաբերելով մեր մէջ ուրախութեամբ և տրտմութեամբ խառն մի անսովոր զգացմունք կ'յզանայ : Մեր զգացմունքը ուրախական է , քանի որ Հայը եթէ իր եկեղեցւոյ հետ կենդանութիւն կ'այլ էլէ , այս դարուս պարգէն է . եթէ օտարի առաջին մի նշանակութիւն ստացած է առաւել այս դարուս արդիւնքն է , եթէ իր մատենագրութիւն ոսկեայ դարու հետ կ'մաքառի , այս դարուս պտուղն է : Բայց տրտմական է , մեր զգացմունքը , քանի որ այս դարումս Հայի քաղաքական կեանքը սակաւ առ սակաւ նուազելով ապագայ աւերները կը դուշակէ , այս դարումս մեր նուիրական աւանդութիւնները կերպարանափոխ կլինին և յուսնականի ու լատինականին կ'մերձենան : Եւ հենց այս պատճառաւ Հայի Աստուածապաշտութիւնը և քրիստոնէութիւնը մի արտաքին կերպարանք կ'առնու : Այն դասերը որոնք երբեմն սերտ կապակցութիւն ունենալով մի Ազգ և մի Եկեղեցի

կազմում էին . այստեղ կսկսին բաժանուիլ : Հոգևորական զասը բոլորովին կբարձրանայ . աշխարհականը բոլորովին կը նուազի : Բայց մենք սակաւ ինչ ընդարձակ խօսենք այս ուշադրութեան արժանի դարուս մէջ վայլած քրիստոնէութեան վրայ :

Եթէ մենք համարձակուինք կարող ենք ասել անաչառ , որ տասներկուերորդ դարումը բոլորովին անզղայացած էր մարդկանց սրտերի մէջ և ճշմարիտ քրիստոնէութիւնը եկեղեցւոյ և Աւետարանի մէջ իր ապաստանը գտած : Այս երկնային կրօնի ոգին թէպէտ համահաւասարութիւն և մարդասիրութիւն է , այսու ամենայնիւ նա գերեզման էր մտել և քրիստոնութիւնը միայն կայանում էր աւանդութիւնների և սովորութիւնների մէջ : Ահա այս դարուս քրիստոնէութիւնն էր , որ մահմետական կրօնից ևս ստորնացրուց իր արժանաւորութիւնը : Ո՞ր ճշմարիտ քրիստոնեայն մի բաւականութիւն կատանայ երբ այս դարուս մէջ Արեւմուտքի եկեղեցւոյ մէջ մոնէլոյ՝ քրիստոնէական յառաջադիմութիւն որոնէ . նա կտեսնէ Աստուածաշունչի լոկ ընթերցմունքը , բառերի զննութիւնը , և աւանդութիւնների ջերմ պաշտպանութիւնը : Այնքան էին անտես արած Աւետարանը այս եկեղեցւոյ անդամներից շատերը , որ ատիլութեան , նախանձու և վրէժխնդրութեան աթոռ էին շինել իւրեանց սրտերը : Հայի աւտիլը նորա եկեղեցին հայոյեւը արդարութիւն էին համարում . Աստուծոյ պատուիրանաց կատարումն և երկնից արքայութիւնը ժառանգելու բաւականին պատճառ , ուրեմն այսպիսի ատիլութիւնը ի՞նչ չէր կարող յառաջացնել : Եւ յիրաւի ո՞ր քրիստոնեայն և քրիստոսի պաշտպան համարող ազգը՝ քրիստոնեայ ազգին այնպէս աղետալի և թշուառ վիճակ տուած է , ինչպէս արին Յունաց Այսսերները Հայաստանի Բազրատունեանց թագաւորութիւնը կործանելուց յետոյ : Բայց Հայն էլ ընկճում է այս թշուառութենից իր վիհ քրիստոնէական ոգւովը , որուն ոչ Պարսկի դարանները , Սելջուկի անգթութիւնը՝ և Հաղարացու բռնութիւնները կաւորացան ընկճել և նորա քրիստոնէութիւնը նսեմացնել : Հայը այն ժամանակ մէկ քրիստոնեայ դիւցազն էր , բայց մոռանում է իր անցեալ կեանքը . ներկայով ընկճուած Գոհանամ , ասում է ,

Հայր , զի զիս ոչ՝ արարեր իբրև զՀելլենացի* :

Բազրատունեանց տէրութեան անկումը միայն մէկ զոհ էր Բիւզանդիոնի , կայսերութեան սահմանների ապահովութեան համար . Բիւզանդիոնը երկար ժամանակից ընտէ ցանկացած էր Հայաստանի միութիւնը . որ Հայաստանը պատնէշ լինի արևելքումը գոյացող ազգերի և նրանց հեղեղանման արշաւանքների գէմ . այս միութեան համար շատ մեծ ջանք է արել . բայց Սելջուկների գոյութիւնը և նրանց արշաւանքի երկիւղը ստիպեցին Բիւզանդիոնին զէնք առնուլ և այնպէս Հայաստանը միացնել իրա հետ : Բիւզանդիոնը Բազրատունեանց իշխանութիւնը կործանելու համար ամենայն կերպի ոճիրները և չարագործութիւնները ի դործ դրաւ . նա մոռացաւ թէ Հայաստանը ուղղափառ քրիստոնէութեան սպասաւոր է . այս միջոցը մի յարմար առիթ եղաւ քրիստիանոյիը Յոյներին վրէժ առնուլ Հայաստանից իբրև հերիտիկոսից , և աւար առնուլ նորա ինչքը և ստացուածքը : Բայց ինչ նպատակի համար Բիւզանդիոնի արքունիքը խախտեց Բազրատունեանց դահը , այն ևս իրան չը յաջողեցաւ : Սելջուկները մի անսովոր հեղեղի պէս Հայաստանը աւերելով , Յունաստանի սահմանները անապատացնելով , արիւնով և աւարով առատանալով հանգստացան : Այս հարուածներից յետոյ Հայոց քաղաքական կեանքը միացել էր Յունաց հետ . որոնք անզօր էին Յոյնի հպատակեցին , իսկ զօրաւորների և կարողութիւն ունեցողների յամառութիւնը չներեց Յոյնին հպատակել . նոքա սկսեցին դաղթել օտար երկրքի և օտար աստղի տակ . լաւ համարեցին Մոնղոլի Բռնութեան տակ ընկնուիլ , քան թէ քրիստոնեայ ազգի օրէնքներին հպատակիլ : Թող ուրեմն այս դաղթականութիւնների ժամանակ ողբերը , կոծերը , մահերը , արիւն արտասուները լինին Հայերիս Յուներան կայսերների քրիստոնէութեան չափին . և մեր նախնեաց կրած հալածանքները նրանց առեւտրութիւնից : Բայց Յոյնին հպատակողները առաւել շատ էին . որովհետեւ հարուածները բոլորովին նուզացրել էին Հայի նիւթական կեանքը . Հայը աւանայ իր աղքատութիւնից ստիպուած հպատակեցաւ Յունական օրէնքներին , որոյ առաջին Հայը շատ ստրկացաւ :

* Լամբ . Յատ . իր (194)

Այս հարուածներից յետոյ թէպէտ Հայր մի անկախ իշխանութիւն կարողացաւ ձեռք ձգել Կելիկիայումը , բայց այն մեծ նշանակութիւնը չստացաւ ինչ պէս վերին Հայոց մէջ եղած թաղաւորութիւնները ստացան , այս իշխանութիւնը չ'կարողացաւ բոլոր Հայերին իր հովանաւորութեան տակ գրաւել . Հայերը ցրուած էին ինչպէս Հայաստան նմանապէս Յունաստան , Ատորեստան , մինչեւ անգամ Թուրքաստան : Այս իշխանութիւնը սկզբումը մի նպատակ ունեցաւ , որ Գաղիկ Գ.ի անպարտ մահուան վրէժխնդիր լինի . բայց վերջը տէրութեան ձեւ ստանալով բաց թողեց այս նպատակը : 12-րդ դարումը քաղաքական հանգամանքները դարձեալ ստիպում էին Յունական կայսերութեան Հայի սիրտը միացնելու , որոյ միակ միջոցն էր երիւս բաժանեալ եկեղեցիների և երկու միմեանց ատող ազգերի միութիւնը : Հայոց նորածին իշխանութիւնը հաստատուել էր մի այնպիսի յաջող տեղումը , որ Յունական կայսերութեան նոր թշնամիների գէժ կարող էր առաջն առնուլ , և պաշտպանել Բիւզանդիոնի սահմանները : Այս թշնամիները Արևելքումը արդէն Իկոնիոյ Սուլթաններն կամ այսպէս ասել Օսմանցիք էին , որոնք սակաւ առ սակաւ աճում էին տիեզերական պատմութեան մի նոր շրջան ընծայելու . և Արևելքը կերպարանափոխ առնելու : Իսկ Արևմտեան կողմումը խաչակիրներ էին , որոնց խռմբերը արդէն շատ էր կասկածի մէջ ձգել Բիւզանդիոնի կայսերութիւնը : Բայց այս ժամանակ տեսնելով Յունական կայսերութիւնը իր արեան ծարաւ ոսոխի հաղորդակցութիւնը այս կասկածաւոր խռմբերի հետ , բնականաբար շատ երկիւղ կ'ըրաչէր անցեալը մտաբերելով : Բիւզանդիոնի կայսերութիւնը միայն այս կասկածը փարատելու համար էր , որ միութեան ձայները տարածեց Հայոց և Յունաց մէջ համբաւելով թէ՛ վերջ պէտք է տրուի խռովութեան ու երկպառակութեան , և սիրոյ ու խաղաղութեան տեղիք տրուի : Բիւզանդիոնի գահի վրայ բարձրանալով այս դարումս Կիւ—նամանուէլ կայսրը (1145) յայտնի տեսաւ Հայոց միութեան հարկաւորութիւնը և իր նախնեաց զուր ջանքը , մանաւանդ Մանուսիսինը , որ Բաղ-

բառունենանց տէրութիւնը կործանեց : Սա Հայի սիրտը որսալու համար մի նոր հնարք մտածեց՝ բաժանեալ եկեղեցիները միացնել ջանալով , որպէս զի իր տէրութեան սահմանների վրայ գտնուի մի հարազատ և հաւատարիմ բարեկամ : Արդէն այս հնարքը պսակւում էր , եթէ վաստակաւորների վաղահաս վախճանը չէր վերջ դրել ամենայն բանին : Հայր բնականաբար մի մեծ և անսովոր հաւատարմութիւն և հարազատութիւն ունի դէպի իւր տէրը , դաշնակիցը և բարեկամը . ուրեմն եթէ այս միութիւնը գլուխ գար և Հայ սրտերը միանային Յունաց հետ , անտարակոյս Հայը իր կեանքը ևս կըզհեր բարեկամի պաշտպանութեան համար , և Բիւզանդիոնը աննշան Սուլթանների որս չէր լինէր : Բայց սոքա ամէնքը Բիւզանդիոնի վարքի ու բարքի ապականութեան պատիժներն էին , որոնք արդէն գուշակում էին Յունական զահին և զաւազանին տալ այն անողոք հարուածը , ինչպէս կրբեմն Յոյնը տուել էր Բագրատունեանց :

Բիւզանդիոնի արքունիքը թէպէտ այս միութեամբ վարադուրում էր մի քաղաքական նպատակ և այդ պատճառաւ աշխատում էր , սակայն Հայոց կողմի աշխատողները ամենեւին հակառակ էին այդ նպատակին : Հայոց առաջնորդները երկու ազգերի մէջ եղած ատելութիւնը և յառաջագիմութեան առաջին դրուած արդելքները ոչնչացնելու համար էին վաստակում : Հայաստանի հօտին այս դարումս յաջորդեցին մի քանի հովիւներ , որոնք մահու չափ ճգնեցին այս միութեան համար : Գրիգոր Գ. (1113) . Ներսէս Գ. Վլայեցի կամ Շնորհալի (1166) . Գրիգոր Տղայ անուանեալ Վաթուղիկոսը (1173) և Ներսէս Լարբոնացին այն ընտրեալ անձերն են Հայաստանի եկեղեցւոյ պայծառութեան համար , որոնք միայն երկնքի պարզեկարող են կոչուիլ : Սոքա լինելով սիրոյ և խաղաղութեան օթեւաներ , իրանց միակ իղձը եղել է իրանց յանձեալ հօտին ևս սիրոյ և խաղաղութեան հանդրուան շինել : Սոքա միայն միութեան համար աշխատելով անուանի չ'են , այլ իրանց դրաւոր վաստակներով երեւելի , որոնց մէջ փայլում է նրանց ողու վսեմութիւնը և սրտերի մէջ կատարելութիւն ստացող քրիս-

տոնէութիւնը : Սրանց մէջ որովհետեւ առաւել ուշադրու-
թեան արժանի եւ Շնորհալի և Լամբրոնացի Ներսէսները ,
ուրեմն փոքր ինչ խօսենք սրանց վերայ :

Պիտի շարունակուի :

Ներսիս. Հոգ. և Ազգ. Ուսում. աշակերտ
Միսաք. Արամեանց. Կ. Պօլսեցի



ԱՌ ՄԱՅՐՆ ԻՄ ՀԱՅԱՍՏԱՆ :



. Հայկանոյշ ,
.
. , Հորսն վեհ Մասեաց :

Ձոն երկնայինն ի քեզ փայլեալ եղեմեան՝
Ձըքնաղ կուսիդ գեղ հրաշածին աննժման
Ձի՛ իբր հովտաց թառամեցաւ փունջ շուշան :

Ո՞չ ըզգըլտով քով փարէին ի Մասիս
Պարբ աստեղաց ի հարաւոյ ի հիւսիս :
Ո՞չ քեզ նախանձ բերէր արեգ և լուսին՝
Ի ճաճանչել աչացդ իբրև ջահ կըրկին .
Ո՞ր ապա քեզ գիշեր տիրեաց դժոխամած .
Ո՞չ արեւմուտք , այլ արեւելք դու փառաց :

Քո վեհ անուան փառացդ ընդ ծով և ցամաք
Է՞ր տպաքէն որպէս զիք՝ դրօշք՝ դըրոշմեալք՝
Հըզօր Հոռոմք , Բաբելացիք , Ասորիք ,
Եւ Յոյնք , Պարսիկք , Աղուանք և վիրք , Մարք , Արիք
Պաշտօն և խունկ մատուցին և պատարագ ,
Թէ դու չէիր Արամազդ և Արեգակ :

Այլն աղբերաց կենաց հրաշեց մարդկութեան ,
Դու իսկ ինքնին դըրախտ տընկեալ փափկութեան .
Ո՞չ քո ոտից փուշոյն համբոյր տալ կաղնի
Եւ ո՞չ մայրք 'ին Լիբանանու արժանի :

Ապ ըյր ժըպիրհ ձեռք գժոխածին անօրէն
Գըլխոյդ փառաց ըզթագ կապտեաց լուսեղէն :

Ընդ ճեմ հրեղէն և քաղցր ժըպիտ նազելւոյդ՝
Բուսեալ բիւր վարդ , փըթթեալ ծաղկունք՝ բուրեալ հոտ
Մասիս ի սուրբ սէր քո անշէջ էր հարբեալ ,
Եւ դու նըմա հարս ի հօրէդ խօսեցեալ .
Բայց արդ ո՞ւր քո զարդ , փեսայ և սըրսկապան .
Է՞ր դու ի սուգ , մայր իմ այրի Հայաստան :

Ըզհայրենին ոչ քո ասեմ Հայկազնեան
Քո ժառանգեալն թագ և կընիք հարսնութեան՝
Ո՛չ ապ յերիս մատուռս կրեցիր զակն ի նշան
ԶԱրշակունեանն , Բագրատունեանն , Ռուբենեան ,
Տեղ ոսկի ի փեսայութեան տեղալով .
Եւ ի հարսնութեանդ կոյտ մարդարիտ հոսելով :

Նըշանեցար դու հազարաց և բիւրուց
Արամ , Տիգրան , Արշակ , Տրդատ , Արգարուց ,
Ըզգաւաղան արհամարհեալ և օտար թագ ,
Եւ ցանկութիւն դե Սասանեան տիղծ զանյառ .
Արդ ո՞ւր դըրկացդ լոյս շառաւիղ քո կաթին ,
Ո՞ւր առիւծուցդ կորիւնք հրաչեայք հրաշածին :

Զաստուածեղէնն լոյս հաւատոց ի ճակատ
Յերկնաւորին սէր փեսայի՝ կապեալ թագ ,
Դու հարսնացար և մըտեր Սուրբ յառագաստ՝
Ընդ սուրբ Ոսկեանց , սուրբ Վարդանանց յԱյրարատ ,
Մերթ ծածանեալ քո ծիրանի հարսնութեան ,
Մերթ ի կարմիր ըզքօղդ ներկեալ ջերմ արեան :

Թէ ո՛չ հրեղէն , այլ դու էիր հողեղէն ,
Զի՞ և զըժոխք իսկ մարտ ընդ քեզ մըղէին .
Թէ քո անուան զանմահութեան յալթանակ
Նըդէ յերկինս արդ և յաւերժ քո հրեշտակ՝

Ո՛չ ընդ նըմին և քիւ բնաջինջ նըշաւակ
Բիւրոց բիւր պիղծ զատրուշանաց աւերակ :

Իսկ թէ անթիւ շէնք և քաղաքք քո կործան ,
Բիւր արքունիք . յաւեր յաճիւն ցայժմ մըլխան ,
Եւ դաշտ և դետ յարիւն արդար ներկեալ կան ,
Խի՞նդ թէ նախանձ քոց ոտխաց դոքա տան
Ի սէրդ անշէջ , յանունդ անմահ անարատ ,
Ի խաչդ յաղթող ,

.
.
.
.
.
.

Ի զճւր , հաղա՛ , քող սեւածոյր զգեցեալ՝
Առ ոտն Մասեայ ձեռն ի ծնօտի դու եղեալ ,
Երասխ Եփրատ ի թուխ գոգոյդ ընթանան
Եւ քոյդ աչաց դառն արտասուաց տան հորդան :
Զի չե՛ս այրի , քո որբոց բիւր Երանի՛ ,
Մինչ քո անուն և սէր ի մեզ կենդանի :

Ի մեզ որ ի Նոյեան նորոգ տապան նաւեալ յԱյրարատ՝
Ի բիւր մահուց հեղեղանաց փըրկեալ որբք եմք քո աղատ .
Ի մեզ որոց սիրոյն ես դու մայր կաթողին , կեանք կենաց ,
Եւ տէր սըրտից , ո՛հ հարսն Մասեայ , սիլ լոյս մերոց դու աչաց :
Քեզ մեր քընար և երգ , այրի մայր մեր քաղցրիկ Հայաստան ,
Ի ձիթենեղ ծիլ աւետիս բիւր նոր փառաց ահա տան :

Նոր ասպարէզ մեզ քաջութեան՝ երջանկութեան՝ արժանեաց
Եւ քեզ փառաց բիւր պըսակաց՝ և երանութեան Եւրոպ բաց
Առ քեզ ուղղեալ մեր քայլք ի կայթ և ի բիւր յոյս անխափան՝
Առ քեզ և աչք և սիրտ և սէր մեր մխիթար զիմեալ զան .

Մի լար, մի լար, միևնույն է. հիւժիւր, ո՞ր հարսն վեհ Մասեաց
Այլ անթաւամ զու յաւիտեան շուշանդ հովտաց Հայոց կեաց:

Սամուէլ Կիւլջատեանց.



ԽՄԲԱԳԻՐ ՄԱՐԿՈՍ ԱՂԱԲԷԳԵԱՆ.

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԷՆՖԻԱՃԵԱՆՅ

Дозволено цензурою. Тифлисъ, 30 Ноября, 1863 г.